ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30—ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8

1978 թվականի սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 8-ը պատմական հիշարժան օրեր հանդիսացան մեր եկեղեցական և ազգային ժամանակակից պատմության մեջ ու մի ուշագրավ հանգրվան Մայր Աթոռ ս. Էջմիածնի և Վեհափառ Հայրապետի եկեղեցաշեն, հայրենանվեր գործունեության ճանապարհի վրա՝ ոգևորիչ արդյունքներով:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ 70-ՐԴ ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 23-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1978 թվականի սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 8-ը պատմական հիյան 70-ամյակը, իսկ սեպտեմբերի 30-ին՝ կաթողիկոսական ընտրության 23-րդ տարեդարձը:

Մայր Աթոռի Գերագույն հոգևոր խորհուրդը որոշեց 1978 թվականի հոկտեմբերի 1—2 օրերին համազգային հանդիսությամբ նշել հիշարժան այդ իրադարձությունները:

Հայոց Հայրապետի գահակալությունը մեր եկեղեցու ժամանակակից տարեգրության մեջ մի նոր էջ բացեց հայ եկեղեցու և Մայր Աթոռի ներկա պատմության մեջ հոգևոր, եկեղեցական, մշակութային, շինարարական, հայրենասիրական ու խաղաղասիրական խանդավառ իրագործումներով, ինչպես նաև միջեկեղեցական, էկումենիկ հարաբերությունների ամրապնդման ուղղությամբ:

Անցնող 23 տարիների ընթացքում Հայոց Հայրապետի բարձր անձնավորությունը նույնացել է Մայր Աթոռի և Հայոց վերածնված աշխարհի հետ:

Նրա ոգեշունչ անձնավորությունից ճառագայթող լույսն է, որ ջերմացրել է ողջ հայության սիրտը, որ ի հայրենիս և ի սփյուռս աշխարհի, և անքակտելի կերպով կապել սուրբ Էջմիածնի և Հայոց մայր հողի հետ:

ԺԱՄԱՆՈՒՄ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՐԵՐԻ

Սեպտեմբերի 26-ից սկսած մինչև 30-ը Մայր Աթոռ ժամանեցին Կ. Պոլսի հայոց ամենապատիվ տ. Շնորհք պատրիարք Գալստյանը, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը, ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի առաջնորդ տ. Վազգեն արքեպ. Հովսեփյանը, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ տ. Զավեն եպս. Չինչինյանը, Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց առաջնորդ տ. Գարեգին եպս. Գազանճյանը, Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը, Անգլիայի հայրապետական պատվիրակ և Լոնդոնի հայոց հոգևոր առաջնորդ տ. Ներսես եպս. Պոզապալյանը, Դամասկոսի հայոց առաջնորդ տ. Ոսկան ծ. վրդ. Գալփաքյանը, Ավստրիայի հայոց հոգևոր հովիվ տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը, Շվեյցարիայի հայոց հոգևոր հովիվ տ. Վազգեն ծ. վրդ. Թադոյանը՝ ի գլուխ եկեղեցական և աշխարհական պատգամավորների:

Ներքին թեմերից հանդիսություններին մասնակցում էին Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, Շիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպս. Շաքարյանը, Վրաստանի հայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանը, Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը, ս. Գեղարդ վանքի վանահայր տ. Եղիշե քհն. Սարգսյանը, ս. Հռիփսիմե վանքի վանահայր տ. Մասիս վրդ. Գալըստյանը, Մայր Աթոռի ողջ միաբանությունը ու քահանայից դասը:

Հանդիսություններին մասնակցում էին Մայր Աթոռի բարձրաստիճան միաբաններ, տ. Սիոն արքեպ. Մանուկյանը (ԱՄՆ), տ. Պսուկ արքեպ. Թումայանը (Լոնդոն):

Մայր Աթոռում տեղի ունեցող հոբելյանական հանդիսություններին հրավիրել էին նաև քույր եկեղեցիների հոգևոր պետեր և պատգամավորություններ:

Ռուս պրավոսլավ եկեղեցու պատվիրակությանը գլխավորում էր Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքը, վրաց օրթոդոքս եկեղեցու պատվիրակությանը, հանուն Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսի, գլխավորում էր Ածղուրիի և Նիկործմինդայի տ. Շիո եպիսկոպոսը, Լիսաբոնի Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունը ներկայացնում էր հիմնարկության հայկական գործերի բաժնի ղեկավար տիար Ռոբերտ Կյուլպենկյանը՝ իր հարգելի տիկնոջ հետ, «Խաղաղության քրիստոնեական կոնֆերանս»-ը ներկայացնում էր կոնֆերանսի փոխպրեզիդենտ դոկտ., պրոֆ. Գերհարդ Բասսարակը:

Հրավիրյալների թվում էին Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ հայր Ներսես Տեր-Ներսեսյանը և Մարսելից՝ վերապատվելի Հարություն Հելվաճյանը:

Իրաքի հայոց թեմի պաշտոնական ներկայացուցիչներն էին Վարչության նախագահ դոկտ. Հասրաթ Միքայելյանը, որին ընկերակցում էր նաև նրա հարգելի տիկինը՝ Աղավնի Միքայելյանը, և Վարչության գանձապահ պրն. Հայկ Բոստանյանը՝ ուղեկցությամբ իր հարգելի տիկնոջ՝ Սոնա Բոստանյանի:

Շվեյցարիայի հայոց համայնքը ներկայացնում էր Մկրտիչ Շելեֆյանը՝ ուղեկցությամբ իր հարգելի տիկնոջ՝ Երջանիկ Շելեֆյանի:

Բուլղարիայի հայոց թեմական խորհրդի ատենապետ պրն. Օնիկ Ասլանյանը ներկայացնում էր Բուլղարիայի հայոց թեմը՝ ուղեկցությամբ իր դստեր՝ օրիորդ Սելմա Ասլանյանի:

Թուրքիայի հայոց պատրիարքի շքախմբի անդամներն էին տ. Բարթուղ քհն. Խրքաջյանը, տ. Վահրամ քհն. Խաչատրյանը, տ. Վարդան քհն. Գասպարյանը, տիարք Բագրատ Օսեմերջին, Կարո Յաուլջյանը:

Լոնդոնից որպես հյուր ներկա էր Արթին Գալայճյանը, Ավստրալիայից՝ Վահրամ Արաթունը, Լիզի Արաթունը, Վիլլի Էլլիսը, Դամասկոսից՝ Վահե Յագուպյանը, Զարեհ Գրիգորյանը, Բուխարեստից՝ պրոֆ. Հովհաննես Պետիկյանը, Կանադայից՝ տեր և տիկին Արթին և Լուսի Գավուքյանը:

Երևանի օդանավակայանում հոգևորական և աշխարհական բոլոր պատգամավորները հանդիսավորությամբ, ջերմորեն դիմավորվեցին կարգադրիչ հանձնաժողովի անդամների և Մայր Աթոռի միաբանության կողմից:

Ռուս պրավոսլավ եկեղեցու Սրբազան Պատրիարքին և նրա շքախմբի անդամներին օդանավակայանում դիմավորեց Հայոց Հայրապետը՝ ընկերակցությամբ տ. Շնորհք սրբազան պատրիարքի, արքեպիսկոպոսների և եպիսկոպոսների:

Հայոց Հայրապետի և Մայր Աթոռի հարգելի հյուրերին՝ Տ. Պիմեն և տ. Շնորհք սրբազան պատրիարքներին, ողջունեց և բարի գալուստ մաղթեց նաև հայրենի կառավարության ներկայացուցիչ և ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Սեպտեմբերի 30-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամը 18-ին, Հայոց Հայրապետը, շրջապատված հոգևորական և աշխարհական պատգամավորներով, եկեղեցական թափորով, Վեհարանից առաջնորդվեց Մայր տաճար և նախագահեց կիրակամտի ժամերգությանը:

Հոկտեմբերի 1, կիրակի. Տօն Վարագայ սրբոյ Խաչի.

Այսօր Հայոց Հայրապետի գահակալության 23-րդ տարեդարձն է:

Առավոտյան ժամը 10.30-ին Նորին Սրբությունը, այս ուրախ և պատմական օրվա առիթով, հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Մայր տաճարի Ավագ սեղանի վրա:

Սուրբ սեղանին սպասարկում են տ. Տիրայր և տ. Ներսես եպիսկոպոսները, Մայր Աթոռի վարդապետաց, քահանայից և սարկավագաց դասերը:

Մայր տաճարի Ավագ սեղանի դիմաց, ատյանում, իրենց դիրքի և աստիճանի համեմատ, մասնավոր գահերի վրա տեղ են գրավել Տ. Պիմեն և տ. Շնորհք պատրիարքները, վրաց եկեղեցու պատվիրակությունը, ինչպես

նաև արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ, իսկ տաճարի աջակողմյան և ձախակողմյան դասերում՝ հոգևորական և աշխարհական պատգամավորներ, հյուրեր:

Սուրբ պատարագի Եկմալյան երգեցողությունը կատարում է Մայր տաճարի երգչախումբը՝ ղեկավարությամբ Խորեն Մեյխանեջյանի:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Հայոց Հայրապետը:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(1 հոկտեմբեր 1978 թ.)

«Տէր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո»:

«Տեր, եթե իմ շրթներս բաց անես, իմ բերանը երգելու է քո օրհնությունը»:

1943 թվականին, ուղիղ 35 տարիներ առաջ, Բուխարեստում մի նոր ձեռնադրված երիտասարդ վարդապետ, Վազգեն անունով, իր անդրանիկ պատարագն էր մատուցում Բուխարեստի սրբոց Հրեշտակապետաց եկեղեցում, խուռներամ հավատացյալ ժողովրդի ներկայությամբ: Նա իր քարոզն սկսեց նույն այս բնաբանով. «Տէր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո»:

Հիշեցեք մի պահ՝ 1943 թվականը, պատերազմի ամենաահավոր տարիներից մեկը, հայրենական պատերազմի, համաշխարհային երկրորդ պատերազմի օրերը, երբ մարդկային արյունը հեղեղի նման հոսում էր բոլոր ճակատների վրա: Միայն սովետական ժողովուրդները, ինչպես գիտեք, քսան միլիոն զոհ տվեցին, այդ թվում նաև ավելի քան երկու հարյուր հազար հայ ժողովրդի զավակներ: Տակավին պատերազմի վախճանը հայտնի չէր, և չգիտեինք, թե արդյոք այդ նահավոր գոյամարտը վերջանալո՞ւ է արդարության հաղթանակով: Այդ դժվարին պայմանների մեջ էին նաև հայերը Ռումինիայում, երբ Ռումինիան ինքը գտնվում էր թշնամի ճակատի վրա, ֆաշիստական Գերմանիայի տիրապետության ներքո:

Ահա այդ օրերին էր, որ Մենք, այն ժամանակ երիտասարդ վարդապետ, Աստուծո և ժողովրդի առաջ ուխտեցինք Նառայել մեր եկեղեցուն և ժողովրդին՝ բնաբան ընտրելով՝ «Տէր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո»: Ինչքան հիշում ենք, Մեր քարոզը զարգացրինք աղոթքների շարքով: Ուխտ էինք անում աղոթել մեր եկեղեցու անվտանգության և ծաղկումի համար, մեր ժողովրդի համար, մեր հայրենիքի համար: Այդ օրերին անշուշտ աղոթեցինք նաև աշխարհի խաղաղության համար, որպեսզի վերջ գտներ այդ անհեղ ահռելի պատերազմը: Օրն էր նոյեմբերի 28-ը, այսինքն նախօրյակը Սովետական Հայաստանի պետական տոնի: Այդ օրերին Մենք ի վիճակի չէինք հիշատակելու նոյեմբերի 29-ը, ոչ էլ Սովետական Հայաստանի անունը հասկանալի պատճառներով: Գրտնվում էինք գերմանական գրավման տակ: Սակայն, այնուամենայնիվ, հոգեկան հարմարությունը ունեցանք աղոթելու զոհված հայ զինվորների հոգիների համար: Մեր աղոթքն էր նաև, որ Աստված օգնության հասնի թե՛ հայ ժողովրդին, թե՛ բոլոր ազատասեր ժողովուրդներին, որոնք միացյալ ճակատ կազմած այն ատեն՝ Սովետական Միությունը, Ֆրանսիան, Անգլիան, Ամերիկան և այլ պետություններ, մարտնչում էին հանուն ազատության և արդարության:

Սիրելի ժողովուրդ, այսօր ուղիղ 35 տարի հետո, երբ Մեր կյանքի 70-ամյակն է նշվում և Մեր հայրապետության 23-րդ տարեդարձը, Մենք հիշեցինք 1943-ի նոյեմբերի 28-ի Մեր պատարագը, Մեր ուխտը, Մեր աղոթքը: Աղոթել՝ նշանակում է նաև գործել: Ահա այդ ոգով է, որ Մեր աղոթքը առ Աստված առաքեցինք այն ժամանակ: Եվ այսօր էլ ուզում ենք նույն այդ ուխտը, նույն այդ աղոթքը կրկնել: Աղոթել և գործել մեր ս. եկեղեցու, Մայր Աթոռ ս. Էջմիածնի անսասանության և հետագա է՛լ ավելի ծաղկումի և բարգավաճումի համար, աղոթել մեր ժողովրդի, թե՛ Հայաստանում բնակվող և թե՛ ի սփյուռս աշխարհի ապրող Մեր հոգևոր զավակների բարօրության, խաղաղության և հայրենաբաղձ ազգային զգացմունքների ամրապընդման համար: Այսօր բազմաթիվ ուխտավորներ կան այստեղ հեռավոր երկրներից եկած, մեր ժողովրդի հարազատ զավակներ. և անվասիկ ինչպիսի սքանչելի իրադրության մեջ միաձուլվում են հայի զգացմունքներն ու մտածումները, դառնում մեկ ամբողջություն, մեկ կամք և մեկ մտածողություն, նույն հույսերով, նույն ապրումներով և նույն, ավելի պայծառ ապագայի հեռանկարով ոգեշնչված:

Մենք այսօր թեև պատերազմի պայմանների մեջ չենք գտնվում, սակայն աղոթում ենք աշխարհի խաղաղության և ժողովուրդների բարեկամության համար, որպեսզի չկրկնվեն պատերազմներ և ցեղասպանություններ, ինչպես պատահեց այդ մեր ժողովրդին 1915 ևն թվականին: Թող չկրկնվեն արյունահեղություններ, հաղածանքներ, անարդարություններ, և մարդիկ միանան իբրև միևնույն Աստուծո զավակները, հասկանան վերջապես, թե բոլոր ազգերը հետ այսու նույն ճակատագիրն ունեն, նույն երկրագնդի բնակիչներն են և հետևաբար ձեռք-ձեռքի տված պետք է աշխատեն բոլորի երջանկության համար, որովհետև բոլորի երջանկությունը ամեն մի ազգի երջանկությունն է, և ամեն մեկի երջանկությունը՝ բոլորինը: Այս մարդասիրական և գերազանցապես քրիստոնեական, ավետարանական սկզբունքը երանի թե վերջապես հասկացվի բոլոր մարդկանց, բոլոր պետությունների ղեկավարների կողմից, և մարդկությունը ընթանա դեպի լույս, դեպի առաջադիմություն, դեպի խաղաղ գոյակցություն և արժանի լինի Աստուծո օրհնության:

Սիրելի ժողովուրդ, մենք ապրում ենք, այսպես կոչված, էկումենիկ ժամանակաշրջանում: Դա եկեղեցիների միջև եղբայրության և միության ամրապընդման ժամանակաշրջան է: Բոլոր քրիստոնեական եկեղեցիները, այլևս մոռացած իրենց հին վեճերը և անհասկացողությունները, որոնք դարեր տևեցին և երբեմն այնքան ողբերգությունների պատճառ դարձան, այսօր, բոլորն անխտիր, կողք-կողքի են գտնվում միատեղ աղոթելու, միատեղ գործելու և իրենց հոգևոր միությունը ամրապնդելու Քրիստոսի սիրո մեջ: Անվասիկ, ինչպես տեսնում եք, այստեղ ներկա են քույր եկեղեցիների պատվիրակություններ, մեկը ռուսաց պրավոսլավ եկեղեցու՝ գլխավորությամբ Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի, և մյուսը՝ վրացական պրավոսլավ եկեղեցու, եկած մեր դրացի եղբայրական Վրաստանից: Այստեղ են նաև ներկայացուցիչներ Միսիթարյան հայրերից և հայ ավետարանական եկեղեցուց: Ահա սքանչելի մի իրադրություն: Այս պահին, երբ Մեր կյանքում գործունեության մի նոր շրջան է սկսվում, 70 տարուց հետո, Մենք աղոթում ենք, որ այս միջեկեղեցական սքանչելի հարաբերությունները հետզհետե ավելի զարգանան, աճեն և հասնեն իրենց ցանկալի լրումին:

Եվ քանի որ խոսում ենք քույր եկեղեցիների մասին, մեր փոխադարձ

սիրո, մեր գործակցության մասին, Մենք ուզում ենք նաև մի տխուր պարագա հիշել այստեղ. այն է՝ որ մի երկու օր առաջ վախճանվեց Հռոմեական կաթոլիկ եկեղեցու Պապ Հովհաննես-Պողոս Առաջինը, որ հազիվ մեկ ամիս առաջ նոր էր ընտրվել իբրև գերագույն պետը այդ մեծ եկեղեցու: Մենք քիչ առաջ Մեր ծածուկ աղոթքի մեջ աղոթեցինք նրա հոգու խաղաղության և լուսավորության համար: Թող Տերը անմոռաց պահի նրա հիշատակը երկնից արքայության մեջ:

Եվ արդ, Մեր հայացքը կրկին դարձնում ենք դեպի Մեր սիրեցյալ եղբայրը՝ Նորին Սրբություն Պիմեն Սրբազան Պատրիարքը Համայն Ռուսիոյ, մաղթում ենք Նրան քաջառողջության և երջանիկ հովվապետության երկար տարիներ: Թող Աստված օրհնի մեր այս հանդիպումը և է՛լ ավելի զորացնի մեզ, որպեսզի կարողանանք նրա կամքը կատարել երկրի վրա: Ամեն:

Հայոց Հայրապետի քարոզի ավարտին սուրբ սեղան է հրավիրվում նաև Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը, որն արտասանում է ողջույնի և շնորհավորանքի հետևյալ խոսքը:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ՊԻՄԵՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(1 հոկտեմբեր 1978 թ.)

Ձերդ Սրբություն,

Ի Տեր սիրեցյալ եղբայրներ և քույրեր.

Խորապես ուրախ զգացումներ են համակել ինձ և ռուս պրավոսլավ եկեղեցու պատվիրակության բոլոր անդամներին այս պայծառ և նշանակալից օրը, երբ մենք հավաքվել ենք սուրբ Էջմիածնում՝ ողջունելու Ձերդ Սրբությանը, արժանապատիվ և սիրեցյալ հոգևորականներին, ինչպես նաև Հայաստանյայց առաքելական եկեղեցու բարեպաշտ հոտին՝ Ձերդ Սրբության ծննդյան 70-ամյակի փառապանծ հոբելյանի առթիվ:

Գտնվելով այս հինավուրց փառավոր տաճարում, լսելով հոգեպարար ժամերգությունը և դիտելով հավատացյալների բազմությունը, որը սրտագին աղոթքներ է առաքում Ամենակալ Աստծուն և Ստեղծարարին Ձերդ Սրբության քաջառողջության համար, մենք խորապես զգում ենք հոգևոր մերձակցությունը մեր երկու եկեղեցիների միջև, նրանց միացյալ ու կենարար ակունքները, որոնք գնում են դեպի դարերի խորքը, դեպի ոչ բաժանյալ եկեղեցու դարաշրջանը: Մենք մեծ հարգանքով ենք վերաբերվում Հայաստանյայց սուրբ եկեղեցու հինավուրց ավանդություններին, նրա անկեղծ մերձեցման դեպի էկումենիկ համագործակցությունը, նրա գործոն մասնակցությանը ժամանակակից մարդկության կարիքների բավարարմանը: Ձերդ Սրբության և Ձեզ շրջապատող հոգևորականների հետ միասին մենք աղոթում ենք քրիստոնեական միության, քրիստոնեական սիրո և եղբայրության ամրապնդման և ժողովուրդների միջև խաղաղության համար: Մենք հավատում ենք, որ մեր աղոթքները առավել կմերձեցնեն մեր եկեղեցիները, առավել կմիացնեն մեզ՝ կատարելու էկումենիկ և խաղաղասիրական ընդհանուր խնդիրները:

Այսօրվա օրը թանկ է մեզ համար նաև նրանով, որ աղոթքներով ենք նշում պատմական մի մեծ իրադարձություն մեր ժողովուրդների կյանքում, այն է՝ Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակը:

ԵՐԿՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ ՎԵՀԱՐԱՆԻ ԲԱԿՈՒՄ

Երկար դարերի ընթացքում հայ ժողովուրդը կրել է ազգային և կրոնական ճնշման լուծը: Պարսկական տիրապետությունից ազատագրվելու նրա երկարատև և համառ պայքարի, ինչպես նաև ռուսական զենքի հաղթանակի և 1804—1829 թվականների ռուս-պարսկական և ռուս-տաճկական պատերազմների շնորհիվ, 1828 թ. փետրվարի 10-ին Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանը մտավ Ռուսաստանի կազմի մեջ, որը, ինչպես գիտենք, հայ ժողովրդի համար առաջադիմական մեծ նշանակություն ունեցող ակտ հանդիսացավ:

Այդ միացումը հնարավորություն տվեց հայ ժողովրդին սերտ կապեր հաստատելու ռուս ժողովրդի հետ, որի օգնությամբ՝ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության շնորհիվ նա ձեռք բերեց կատարյալ ազատություն: 1920 թ. նոյեմբերին հռչակվեց Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը, որը մտավ սովետական ժողովուրդների մեծ ընտանիքի մեջ: Մեր բազմազգ պետության ժողովուրդները, որոնց թվում նաև ռուս ժողովուրդը համակված են խորին հարգանքով և եղբայրական սիրով դեպի տաղանդավոր և աշխատասեր հայ ժողովուրդը և անկեղծորեն ուրախ են Սովետական Հայաստանի ձեռք բերած նվաճումներով՝ ձեր գեղեցիկ հանրապետության կյանքի բոլոր բնագավառներում:

Սիրեցյալ եղբայրներ և քույրեր, մեզ խորապես ուրախացնում է ամբողջ աշխարհի հայության հոգևոր կենտրոն սուրբ Էջմիածնի հետզհետե աճող նշանակությունը, որի բարեհամբավ ազդեցությունը ներկայումս դուրս է գալիս Հայաստանյայց առաքելական եկեղեցու սահմաններից: Մենք գիտենք, որ ս. Էջմիածնի հեղինակության այդ աճմանը խոշոր չափով նպաստել է Նորին Սրբության՝ երջանկահիշատակ Գևորգ Զ Ամենայն Հայոց կաթողիկոսի և մանավանդ Նորին Սրբություն Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի հովվապետական, եկեղեցական-հայրենասիրական և խաղաղասիրական գործունեությունը: Մենք ուրախ ենք վկայելու այստեղ ռուս պրավոսլավ եկեղեցու խորին հարգանքի արտահայտությունը հանդեպ հայ առաքելական եկեղեցու և անձամբ Ձեզ, Ձերդ Սրբություն, այդ եկեղեցու փառապանծ պետիդ: Հանձին Ձեզ մենք տեսնում ենք իմաստուն կրոնապետի, հեղինակավոր էկումենիկ գործչի, ժողովուրդների միջև խաղաղության և արդարացի փոխհարաբերությունների ականավոր ջատագովի:

Բոլորին հայտնի է Հայաստանյայց առաքելական եկեղեցու և անձամբ Ձերդ Սրբության մշտական և մեծ ավանդը հօգուտ խաղաղության գործին: Մենք ոգևորությամբ վկայում ենք, որ ռուս պրավոսլավ եկեղեցուն և հայ առաքելական եկեղեցուն միավորում է համատեղ, գործոն և վճռական հայրենասիրական և խաղաղասիրական գործունեությունը: Դրա փայլուն օրինակն է հանդիսանում մեր եկեղեցիների համագործակցությունը «Կրոնական գործիչները կողմնակից են կայուն խաղաղության, զինաթափման և ժողովուրդների միջև արդարացի փոխհարաբերությունների» նշանաբանով հրավիրված համաշխարհային կոնֆերանսի նախապատրաստման և անցկացման աշխատանքներում, կոնֆերանս, որն այնքան բարեհաջող անցավ Մոսկվայում անցյալ տարվա հունիսին, և որի պատվավոր նախագահներից մեկն էիք Դուք, Ձերդ Սրբություն:

Մենք ջերմեռանդ աղոթում ենք, որպեսզի Տերը առատորեն Իր օրհնությունները բաշխի հայ հիանալի ժողովրդի խաղաղ ու ստեղծարար աշխատանքին, ինչպես և ջերմորեն մաղթում ենք հետագա ծաղկում գեղեցիկ Սովետական Հայաստանին;

Թող դարերով անխախտ մնա օրհնյալ եղբայրական սերն ու բարեկամությունը հայ, ռուս և Սովետական մեծ Միության բոլոր ժողովուրդների միջև:

Թող առավել ամրապնդվի եղբայրությունն ու համագործակցությունը հայ ուղղափառական և ռուս պրավոսլավ եկեղեցիների միջև՝ ի փառս Աստուծո, ի բարօրություն մեր հայրենիքի, հանուն ընդհանուր և արդարացի խաղաղության:

Թող Աստուծո օրհնությունները մշտապես լինեն Ձերդ Սրբության և ձեր հինավուրց եկեղեցու վրա: Թող Ամենաողորմածն Աստված բաշխի իր շնորհները Ձեզ, Ձեր գործակիցներին ու հոգևոր դասին և Ձեր աստվածասիրական հոտին՝ ապրելու բարօրությամբ և խաղաղ կյանքով:

Հավարտ ս. պատարագի հանդիսավորությամբ կատարվում է Հայրապետական մաղթանք:

Արարողությունից առաջ ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը խոսք է առնում և ասում:

Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(1 հոկտեմբեր 1978 թ.)

Այսօր Ամենայն Հայոց Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի մեջ, հանուն ի Հայաստան աշխարհ բնակվող և ի սփյուռս աշխարհի ցրված հայության, կնշենք ծննդյան յոթանասունամյակը սքանչելագործ Հովվապետին Ամենայն Հայոց, Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Առաջին կաթողիկոսին:

Ան Մայր Աթոռ ս. Էջմիածինը վերստին ծաղկեցնող Հայրապետն է, շենշող և շենցնող Հայրապետը շինարարական իմաստով, կրթական, իմացական, մշակութային և հոգևոր կյանքի լույսը ազգին և կրոնական հաստատությանց մեջ վառ պահելու նախանձախնդիր ղեկավարը:

Ուղիղ ազգասիրության և հայրենասիրության օրինակ հանդիսացող անվարան Հովվապետն է Ան:

Քրիստոսի եկեղեցին մարմնին մեջ տարանջատ անդամներուն ներդաշնակ գործակցության ջատագով դաբունապետն է:

Ազգերու փրկության, քաղաքակիրթ մարդկության հառաջդիմության, բարգավաճման, երջանիկ գոյակցության համար իբրև նախաձայման «խաղաղություն և ժողովուրդների բարեկամություն» քարոզող անսասանելի Հոգևոր Պետն է Ան»:

Եվ իբրև այդ, Իր անձին ընծայված բոլոր մեծարանքը, պատիվը, գնահատանքը, կվերադարձնե իր ժողովուրդին, իր հայրերու պատմության, նկարագրին ու հավատքին:

Եվ իբրև այդ, Ամենայն Հայոց Հայրապետը սեպտեմբեր 19-ին պարգևատրվեցավ «Ժողովուրդների բարեկամության» շքանշանով, որու հրամանագիրը ստորագրված է Սովետական Միության Հանրապետությանց նախագահ Բրեժնևի կողմե: Եվ սեպտեմբեր 27-ին Հայաստանի հանրապետության նախագահ, մեծահարգ տիար Բաբգեն Սարկիսովի ձեռքով սույն շքանշանը հանձնվեցավ Նորին Սրբության, Գերագույն սովետի նախագահության պալատին մեջ և ի ներկայության հայ եկեղեցվո բարձրաստիճան ներկայացուցիչներուն:

Այս շքանշանով և Ամենայն Հայոց Հայրապետի անձին մեջեն կպարգեւատրվեր իդեալապաշտ հայ ժողովուրդը և հոգեպաշտ հայ եկեղեցին:

Վեհափառ Տեր,

Թույլ տվեք պահ մը առանձնացնել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և բազմեցնել զայն Լուսավորչի առաքելական Աթոռին վրա, Արագածի կատարին, խոսելու համար Անոր մասին ամենապատիվ Պատրիարք Սրբազաններուն, հոգևորական եղբայրներուն, Հայկական Ընկերվարական Հանրապետության և հայ եկեղեցական համայնքներու ներկայացուցիչներուն, հայ կազմակերպությանց, հայ կրթության, արվեստի ու մամուլի ներկայացուցիչներուն, պատվական զավակներուն հայ ազգին և հարգարժան բարեկամներուն հայ ժողովուրդին:

Կմեջբերեմ խոսքը Հովհան Օձնեցի Հայրապետին, ութերորդ դարեն, երգված իբրև վկայություն Ստեփանոս նախավկայի:

«Աստուածատեղծ մարդոյն պտուղ ընծայեցար,
Մերձ յանմերձենալի լոյսն.
Եւ հայրենի աւանդութեանն եղեր ժառանգորդ»:

Իրավամբ այսպես զարդարված է նաև մեր հոբելյար Հայրապետը, Որուն ծննդյան յոթանասունամյակին դիմաց կանգնած ենք խորունկ պատկառանքով: Իսկապես բեղմնավոր եղավ Իր կյանքը: Եվ երբ զեղուն սիրով կշնորհավորենք զԻնք այս բարեպատեհ առիթով, մեր մտքին մեջ հստակ կպատկերանան գովական Իր ապրումները:

Իր սիրագորով մայրիկի գիրկեն հազիվ ելած՝ Ան արդեն գիրքի և թուղթի ընկերն է անբաժան: Շուտով կդառնա սկաուտ-մարզիկը՝ մարգերու և բարձունքներու թովչության սիրահար: Եվ համալսարանի արթուն ուսանողը կգրե ավարտական իր թեզը՝ «Կարգապահության հարցը մանկավարժության մեջ»: Եվ տակավին հաճույքով կդիտենք գրադարանի սեղանին հակած խորազնին ուսումնասիրողը գրականության և փիլիսոփայության և եռանդուն աշխատողը՝ երիտասարդական, կրթական, մշակութային դաշտին մեջ: Եվ վերջապես մյուռոնով օծված վսեմ ճակատն իր բարձր բընակելու ատակ վարդապետը, որուն շունչը քաղցր է, կամքը՝ ժիր, հոգին ալ կցոլա պայծառությամբ և ունի անսահման թռիչք:

Իր առաքինությունը, Իր ընդունակությունը, Իր նկարագիրը և արտահայտվելու, բանաձևելու Իր շնորհները ընտանի դեմք մը դարձուցին զԻնք Իր ծննդավայր Ռումանիո մեջ, ուրկե արագ ելավ, տարածվեցավ Իր հընչակը դեպի հեռավոր սահմաններ: Ազգն ու եկեղեցին ուրեմն կունենային արժանավոր զավակ մը, անոր վստահելու մեջ և ծանր պարտականություններ, նույնիսկ լուսավորչահաստատ պատմական Աթոռը ի ս. Էջմիածին:

«Եկի՛ր,—կանչեց ձայն մը շքեղակոչ,—լուսավորվե, քանզի քու լույսդ եկավ ու Տիրոջ փառքը քու վրադ ծագեցավ» (Մարգ. Եսայի, գլ. Կ, 13):

Ու Ան երբ Աստուծո կամոք ու ազգին փափաքով բազմեցավ վրան այն նվիրագործված Աթոռին, խինդով պարուրվեցան ազգն ու եկեղեցին միանգամայն, տեսնելով, որ դեպի իրեն կուգան գունդերը բարեպաշտներուն՝ մոտակա կայքերեն և հեռավոր հորիզոններեն: Եվ պապերու հավատքով մընշտապես բաբախուն մնացած Վաղարշապատի այս սրբազան գետիններուն վրա սփռվեցան կանչերը հայկազնյան ուխտավորներուն, որոնք անգամ մըն ալ վկաները կդառնային հույսի, հավատքի, սիրո ցայտումին: Նաև կոչեցեր կատարումները սքանչելի իրագործումներուն:

Եվ տարեգրությունները շքեղագիր արձանագրեցին Տրդատա Դուռը պարունակող պարիսպեն ներս և անոր շրջապատեն դուրս կատարվող ջանքերը բազմազան: Նոր տնկարաններ մշակվեցան տեղագին՝ աճեցնելու համար ամրապինդ ծառեր վաղվան կառույցը կերտելու: Ի՜նչ ուրախություն, զմայլելիորեն հասկավորվեցան ուխտին հավատարիմ հոգիներ, որոնք, իրենց գոտին ամուր կապած զինվորյալներու պես, վեհանձնորեն քալեցին տեսիլ ու հղացք պարգևող հայրենական գետիններուն վրա՝ հուսալով, ցանկալով անձնվեր սպասավորները դառնալու իրենց ժողովուրդի և հայրենիքի հոգևոր արթնության և վերելքին:

Եվ Ինք, մեր երանելի հայրապետներու համարձակությամբ, սիրտերի և հայրենիքի մեջ ապրող Իր զավակներուն անխտիր բաշխեց Քրիստոսի հոգին, իմաստուն խորհուրդներ, անսպառ սեր, հանդարտեցնող, խաղաղեցնող օրհնություններ, գութ ու հոգացողություն: Հայրաբար ստանձնեց ծանրությունը բոլորի հոգիներուն, մրմունջներուն, պատճառված ցավերուն: Հիանալի կամեցողությամբ կրեց, տարավ այս ամենը՝ Իրեն շնորհված արիությամբ, համբերությամբ, առաքյալի տոկունությամբ:

Այս պահուն, երբ ցնծությամբ խնդակցություն կհայտնենք ու կգովերգենք անձն ու գործը հայրենասեր ու շինարար մեր սիրելի Հայրապետին, Հոգևոր Պետին, կտարվինք մտաբերել Իր բոլորած յոթը տասնամյակին լեցուն բովանդակությունը: Ավելի քան քսանհինգ հազար անգամ արևին ծագիլը ողջունող Իր հոգին հարատև ձգտած է իմաստ, նպատակ, կշիռ տալ կյանքին և տենչացած է հասնելու դժվարանվաճ բարձունքներու:

Ինքն էր, որ հուզումով, քաղցրությամբ պատգամեց Իր հոտի բոլոր հասակի զավակներուն, փարատելո՛ւ տեղ գտած դառնությունները, փոքրացնելո՛ւ, ջնջելո՛ւ՝ անձնասիրությունները, բարձրացնելո՛ւ՝ որակը ազնիվ զգացումներուն, վսեմացնելու՝ զարդը ոգիին, լինելու՝ նվիրյալը վայելչագեղ կատարումներու, աճեցնելու՝ ուժը կամքին, բանալու՝ առագաստը արդյունաշատ նավարկության, ծաղկեցնելու՝ հոգեկան առատ բերքը մեր «փոքր ածուին մեջ»:

Ու այս բոլոր բարեմասնություններուն տիրակալ հոգիին՝ Նորին Սուրբ Օծության ծննդյան յոթանասունամյակին առթիվ, Իրեն սրտանց մաղթելով քաջառողջություն և անսահման ոգեկանություն, հայ շարականեն փոխ առնելով, ջերմորեն կասերգենք.

«Հայրապետ սուրբ եւ անբիծ եւ ընտրեալ յորովայնէ, սքանչելագործ վկայ եւ պարծանք ազգի մարդկան. լուսաւորիչ տիեզերաց, սիւն լուսոյ կանգնեալ ի մէջ եկեղեցւոյ», թող միշտ ծաղկյալ մնա գավազան Վեհիդ իշխանության:

ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ

Հայրապետական մաղթանքի ավարտին Հայոց Հայրապետը առաջնորդվում է Վեհարանի գահասրահ՝ Մայր տաճարի զանգերի տոնական ու զվարթ ղողանջների ներքո, մայրավանքի շրջափակում հավաքված տասնյակ հազարավոր ուխտավորների և հավատացյալների խանդավառ արտահայտությունների ներքո:

Գահասրահում տեղ էին գրավել հայ հոգևորականները, պատգամավորներն ու հյուրերը:

Այստեղ էին նաև ռուս եկեղեցու և վրաց եկեղեցու պատգամավորությունները:

Հանուն հայ եկեղեցու լրության և բովանդակ հայ ժողովրդի, Հայոց Հայրապետի ծննդյան 70-ամյակը և գահակալության 23-րդ տարեդարձը շնորհավորում է Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը հետևյալ ուղերձով:

Տ. ԿՈՄԻՏԱՍ ԱՐՔԵՊ. ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ
(1 հոկտեմբեր 1978 թ.)

Վեհափառ Տեր,

Քսաներեք տարի շարունակ, այս օրերին, մենք բոլորս հավաքվում ենք այս սուրբ կամարների տակ՝ նշելու համար ս. Լուսավորչի Աթոռի վրա Ձեր գահակալության տարեդարձը: Այդ տարիներին Դուք, որպես ազգընտիր Հայրապետ, եղաք ճշմարիտ հոգևոր Հովիվ և Տեր մեր ժողովրդին և եկեղեցուն: Այդ տարիների ընթացքում Դուք Ձեր խոսքով, գրչով ու գործով պայծառացրիք Մայր Աթոռ ս. Էջմիածինը, փառավորեցիք նրա պատմական անունն ու առաքելությունը և հաստատեցիք նրա տեղն ու դիրքը աշխարհի քրիստոնյա քույր եկեղեցիների շարքում:

Ձեր եկեղեցաշեն ու ազգանվեր գործունեությանն առընթեր Դուք, որպես քաջ Հովիվ, եղաք խաղաղության առաքյալ, Ձեր պատկառազդու ձայնը բարձրացրիք աշխարհի բոլոր ամբիոններից՝ ի պաշտպանություն ժողովուրդների բարեկամության ու աշխարհի խաղաղության՝ դատնալով ճանաչված ու փնտրված անձնավորություն բարի կամքի տեր հասարակական գործիչների մեջ: Ահա թե ինչու մեր մեծ հայրենիքի՝ Սովետական Միության բարձրագույն իշխանությունը Ձեր ծննդյան 70-ամյակի առթիվ Ձեր կուրծքը զարդարեց «Ժողովուրդների բարեկամության» շքանշանով:

Այսօր Դուք 70 տարեկան եք:

Հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցու նվիրապետական Աթոռների ու թեմերի, հոգևոր դասի ու մերազն հավատացյալ ժողովրդի, հանուն Մայր Աթոռ ս. Էջմիածնի միաբանության ու աշխարհական սպասավորների և հանուն Գերագույն հոգևոր խորհրդի, պատկառանքով ու մեծ սիրով եկել ենք մեր հարգանքի ու հավատարմության տուրքը մատուցելու առ ոտս Մեծի Հայրապետիդ՝ շնորհավորելու Ձեր ծննդյան 70-ամյակը ու մաղթելու Ձեզ արևշատ երկար տարիներ՝ ի պայծառություն մեր սուրբ եկեղեցու և հուրախություն մեր ժողովրդի:

Թող Տերը միշտ ծաղկյալ պահի Ձեր գավազանը, և Ձեր հայրական օրհնությունը անպակաս լինի մեր վրայից. ամեն:

Գահասրահում հանդիսության ավարտին Հայոց Հայրապետը հանդես է գալիս շնորհակալության և օրհնության հետևյալ խոսքով:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ
(1 հոկտեմբեր 1978 թ.)

Այսօր հանդիսավոր օր է բոլորիս համար, բայց մանավանդ Մեզ համար: Խորհրդանշական է գուցե, որ Մեր կյանքի 70 տարիները ուղիղ երկու հավասար մասերի են բաժանվում. 35 տարիներ մինչ Մեր հոգևորական լինելը և 35 տարիներ էլ մինչև այսօր: Ինչպես եկեղեցում ասացինք, Մեր անդրանիկ պատարագը մատուցել ենք ուղիղ 35 տարիներ առաջ, նո-

յեմբերի 28-ին, Բուխարեստում: Բնականաբար այդ օրը հոգեկան արտա-կսիրգ ապրումների և տագնապների մեջ էինք գտնվում: Մեր ոտքը դրել էինք առաքելության մի նոր ճանապարհի վրա, որ տակավին, խոստովանվում ենք ձեր առաջ, այնքան հստակ չէր պատկերվում Մեր գիտակցության առաջ այդ օրերին: Բայց կարճ ժամանակ անց պատերազմը վերջացավ արդարության հաղթանակով, ինչպես գիտեք, և 1945 թ. գարնան, Մեր հոգևորական դառնալուց մոտ մեկ և կես տարի հետո, առաջին անգամ լինելով Մեր կյանքում, եկանք Հայաստան: Մեր ոտքը դրեցինք հայրենի հողի վրա, տեսանք վեհափառ Արարատը և տեսանք, շոշափեցինք և համբուրեցինք ծանր քարերը սուրբ Էջմիածնի, ծանր քարեր, որոնք մեր 1700 տարիների պատմությունն են խտացնում: Շատ հստակ հիշում ենք այն երանելի պահը, երբ այլ հոգևոր եղբայրների հետ, որոնք նույնպես արտասահմանից էին եկել, խմբով Մայր տաճար էինք մտնում: Համարյա բոլորս արտասվում էինք: Այն ժամանակ Հայաստանը ծանր վիճակի մեջ էր, հազիվ դուրս էր եկել ահավոր պատերազմից. այնքան սուգ կար, այնքան զրկանքներ կային, այնքան վիշտ կար, բայց այնքան էլ ուրախություն կար, և նոր հույսեր էին ծաղկում հաղթանակի փառքով: Այսպիսի ապրումներով մի քանի շաբաթ անցկացրինք այստեղ: Սիրում էինք գրեթե ամեն գիշեր դուրս գնալ առանձին և մանգալ Մայր տաճարի շուրջը: Լուռ էր ամեն կողմ, բայց Մեզ այնպես էր թվում, թե այդ լռության մեջ քարերը խոսում էին, և նոր ձայներ էինք լսում: Կամենում ենք խոստովանել ձեր առաջ, թե Հայաստան գալով, ս. Էջմիածինը տեսնելով, թեկուզ ոչ այնքան ծաղկյալ վիճակի մեջ, Մենք զգացինք, թե այդ օրերին սկսվեց պայծառանալ մեր բուն հոգևոր-ազգային առաքելության գիտակցությունը: Աներևույթ մի ուժ կարծես իր դրոշմը դրեց Մեր ճակատի վրա, և Մենք այդ օրվանից կերպարանափոխվեցինք: Զգացինք, այո՛, որ այդ օրվանից Մեր ճակատագիրը Հայաստանն էր, Հայաստանյայց եկեղեցին էր և ս. Էջմիածինն էր: Եվ աշխատեցինք Մեր տկար ուժերով կատարել Մեր պարտքը Աստուծո և մեր ազգի առաջ նախ Ռումինիայում շուրջ տասը տարիներ և ապա այստեղ ս. Լուսավորչի գահի վրա:

Եվ եթե այդ օրերից սկսյալ Մեր էության մեջ ծնունդ առան ու դրսևորվեցին նոր կարողություններ, նոր հնարավորություններ ու շնորհներ, այդ բոլորը սպարտական ենք այն հերշնչումներին, որ քաղեցինք այս սրբացած քարերից և սեղաններից:

Մենք չափազանց մխիթարված կլինենք, եթե մի կաթիլ լույս Մեզանից հետո ավելանա մեր բազմադարյան եկեղեցու պատմության գանձարանի մեջ, և մի շողով ավելի ճառագայթի Լուսավորչի անմար կանթեղը: Բայց Մենք կանգ ենք առնում այստեղ. չենք ուզում շատ ընդացք տալ Մեր զգացումներին: Այժմ կամենում ենք խորազգաց շնորհակալություն հայտնել բոլորիդ և ամբողջ այս ժողովրդին, որ հավաքված է այս առիթով: Հատկապես Մեր շնորհակալությունն ենք ուզում հայտնել այսօր տաճարում խոսողներին, իրենց գլուխը լինելով Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքը, որ սքանչելի խոսքեր ուղղեց մեր եկեղեցուն, մեր ժողովրդին, մեր հայրենիքին և անձամբ Մեզ:

Մեր շնորհակալությունը նաև գերաշնորհ տ. Թորգոմ արքեպիսկոպոսին, որ, հանուն հայ հոգևորականության, այնքան բովանդակալից իր ճառով հոգևոր սնունդ և մխիթարություն բաշխեց հավատացյալ ժողովրդին:

Մեր գնահատանքն ենք ուզում հայտնել նաև Գերագույն հոգևոր խոր-

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՑՑ ՎԱՆԱՏԱՆ ԾՔԱՄՈՒՏՔԻ ԱՌԱՋ
(1978 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ 2)

հրդի անունով գեր. տ. Կոմիտաս արքեպիսկոպոսի արտասանած խոսքի համար: Բազում տարիներ, հենց սկզբից նա եղել է Մեր ամենամտերիմ և հավատարիմ գործակիցներից մեկը:

Այս մի քանի շնորհակալական արտահայտություններով թույլ տվեք վերջացնել Մեր խոսքը, կրկին աղոթելով, որ Տերը չմոռանա մեր փոքրիկ հոտը, մեր սուրբ եկեղեցին, հազիվ բնաջնջումից ազատված և վերածնված մեր մայր հայրենիքը, և օգնական մնա մեզ և մեր ամբողջ ժողովրդին, որպեսզի կարողանանք իր կամքը կատարել այս աշխարհի վրա և քայլ առ քայլ իրականացնել բոլոր մեր ազնիվ երազանքները մեր եկեղեցու և մեր ժողովրդի ապագայի նկատմամբ:

«Ողջ լերուք զօրացեալ սուրբ Հոգւով և յառէտ օրհնեալ ի Տեառնէ և ի մէնջ. ամէն»:

Ժամը 15.30-ին միաբանական սեղանատանը, ի պատիվ հայ և օտար հոգևորական հյուրերի, օրվա հանդիսության առիթով տրվում է ճաշկերույթ:

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՑՑ ՎԱՆԱՏԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԲԱՑՈՒՄԸ

Հոկտեմբերի 2-ին, երկուշաբթի օրը, ժամը 17-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է Մայր Աթոռի նորակառույց վանատան բացման արարողությունը:

Նորակառույցը գտնվում է մայրավանքի շրջափակի հարավ-արևելյան կողմում, Մայր Աթոռի տպարանին առընթեր, աղբյուր-հուշարձանի ետևում, և շարունակությունն է կազմում վանական սեղանատան և մկրտարանմատուռան:

Նորակառույց վանատունը կառուցվել է նվիրատվությամբ Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության:

Վանատան նախագիծը պատրաստել է Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի անդամ Բաղդիկ Արզումանյանը՝ գործակցությամբ Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Արծրուն Գալիկյանի և Հակոբ Բաբախանյանի:

Վանատունը հիմնականում եռահարկ շինություն է՝ բաղկացած 22 ընդարձակ սենյակներից, 3 շքեղ հարկաբաժիններից՝ իրենց ընդունարաններով և 5 ննջարաններով:

Բոլոր սենյակները կահավորված են արդիական կահույքով և օժտված՝ սանիտարական հանգույցներով:

Վանատան շինության ճակատին կա հետևյալ արձանագրությունը.

«Ի հայրապետութեան Տ. Տ. Վազգենի Ա. կաթողիկոսի Ամենայն Հայոց կառուցաւ վանատունս արդեամբ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեանն ի Լիզպոն:

Թվ. ՌՆԻԷ»:

Ժամը 17-ին Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է վանատան նորակառույց շենք և հանդիսավոր իրադրության մեջ և խանդավառ ծափողջույնների ներքո կտրում շքամուտքի ժապավենը՝ տիար Ռոբերտ Կյուլպենկյանի հետ:

Այնուհետև Նորին Սրբությունը, հոգևորական և աշխարհական պատ-

գամավորները, հյուրերն ու ժողովրդի բազմությունը մուտք են գործում շենքից ներս:

Վանատան երկրորդ հարկի ընդունելության սրահում Վեհափառ Հայրապետը, խոսք առնելով այս ուրախ առիթով, ասում է.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՎԱՆԱՏԱՆ ԲԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(2 հոկտեմբեր 1978 թ.)

Նոր վանատան շենքի բացումն ենք կատարում: Այսպիսի ուրախության պահեր բազմաթիվ անգամներ ապրեցինք Մենք այս 23 տարիների ընթացքում, և ահավասիկ այս նոր շինությամբ մի անգամ ևս մեր սրտերը հրճվում են և լցվում հոգեկան անհուն մխիթարությամբ: Ինչպես գիտեք, Մեր հայրապետության շրջանին նպաստավոր պայմանների ներքև, մեր պետական բարեխնամ իշխանության հոգատարությամբ և բարյացակամությամբ, Մեր աշխատակիցների օգնությամբ, արտասահմանի Մեր զավակների նյութական և բարոյական օժանդակությամբ կարողացանք Մեր շինարարական ծրագրերը քայլ առ քայլ ի գործ դնել: Հիշում ենք, 1956 թվականի աշնանն էր, երբ կազմվեց Մայր Աթոռիս առընթեր մի հանձնաժողով՝ բաղկացած հայրենի ծանոթ ճարտարապետներից, հնագետներից և արվեստագետներից, որոնք, առանց որևէ վարձատրության, սիրով և խանդավառությամբ օգնության ձեռք երկարեցին Մեզ և կազմեցին մի ընդարձակ ծրագիր՝ Մայր Աթոռ ս. Էջմիածնի վերաշինության, սկսելով Մայր տաճարից: Այդ հանձնաժողովը գլխավորում էր հանգուցյալ ճարտարապետ Միքայել Մազմանյանը, հայտնի սիրված դեմք Հայաստանում և անձնական բարեկամը մեծատաղանդ բանաստեղծ Եղիշե Չարենցի: Հանձնախմբի անդամներից հիշենք մի անուն ևս, որ, ավա՜ղ, շուտ հեռացավ մեզանից. ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը: Նա ևս մեծ նպաստ բերեց իր սվաղանդով Մայր Աթոռիս շինարարական և բարեզարդման աշխատանքներին:

Արդ, երևակայեցեք, ի՜նչ հոգեկան մխիթարություն է Մեզ համար հաստատել քսան տարիներ հետո, թե այդ ծրագիրը հանարյա ամբողջությամբ իրագործվեց: Եվ այդ ծրագրի մեջ կար նաև այս շինությունը, որ վերջերս իրականացվեց շնորհիվ Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկության առատաձեռն նվիրատվության: Ինչպես ծանոթ է բոլորիդ, թե՛ Հայաստանցիներիդ և թե՛ արտասահմանի բոլոր հայերին, Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկությունը Լիզբոնում հաստատված, ահա մոտ քսան տարիներից ի վեր իսկական աստվածային օրհնություն հանդիսացավ նաև հայ ժողովրդի համար ի Հայաստան և հարտասահման: Մենք ճշգրիտ գումարներ չենք կարող հիշել հիմա, բայց այս Հաստատության կողմից տասնյակ միլիոններ են տրամադրված Հայաստանի և մանավանդ արտասահմանի եկեղեցաշինական, մշակութային, կրթական և բարեսիրական նպատակների իրագործման համար: Հայ ժողովուրդը միշտ երախտապարտ պիտի մնա հանգուցյալ Գալուստ Կյուլպենկյանի սքայծառ հիշատակին և այդ անունը կրող Հիմնարկությանն ի Լիզբոն, որ գլխավորում է փորթուկալացի հայտնի մի անձնավորություն՝ դոկտ. Ազարեդո Պերդիգաոն՝ բարեկամը մեր ժողովրդին: Եվ Մենք շատ երջանիկ ենք, որ այս փորթուկալական բարեսիրական Հիմնարկության ղեկավար դիրքերի վրա են գտնվում երկու հայ անձնավորություններ. մեկը մեծահարգ Գևորգ Եսայանն է, որ հիմա տարիքի բերումով

հանգստյան է կոչված, իսկ երկրորդը, որ այդ գործը իր ձեռքում է պահում և սքանչելի աշխատանք է կատարում, մեծահարգ Ռոբերտ Կյուլպենկյանն է. ահա նա այստեղ ներկա է իր ազնիվ տիկնոջ հետ:

Այս երջանիկ առիթով Մենք պարտք ենք զգում, հանուն Մայր Աթոռ ս. Էջմիածնի և հանուն ձեր բոլորի, որ ներկա եք այստեղ, մի անգամ ևս Մեր խորագույն երախտագիտությունը հայտնելու Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկությանը և Մեր հայրապետական օրհնությունը տալու այդ Հիմնարկության բոլոր ազնվահոգի ղեկավարներին:



Մայր Աթոռի նորակառույց վանատան բացման արարողությունը
(1978 թ. հոկտեմբերի 2)

Մաղթում ենք, որ Աստված խաղաղության մեջ պահի աշխարհը հանդարտ, որպեսզի մեր ժողովրդի եկեղեցական, կրթական ու մշակութային, շինարարական ծրագրերը քայլ առ քայլ ի կատար ածվեն:

Նաև կանխահայտ շնորհակալություններ Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկությանը՝ նրա ապագա բարերարությունների համար:

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ

Հոկտեմբերի 2-ին, երկուշաբթի օրը, երեկոյան ժամը 18-ին, Վեհարանի հանդիսությանց շքեղ դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված Տ. Տ. Վազգեն Ա Հայոց Հայրապետի ծննդյան 70-ամյակին և գահակալության 23-րդ տարեդարձին:

Վեհարանի հանդիսությանց դահլիճը լցված է պատգամավորներով, հյուրերով, պաշտոնական անձնավորություններով, ինչպես նաև մայրաքա-

ղաքի գիտական, մշակութային, ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներով, արվեստագետներով՝ ավելի քան 400 հրավիրյալներ:

Պատվո նախագահության սեղանի շուրջ տեղ են գրավել Վեհափառ Հայրապետը, Տ. Պիմեն և տ. Շնորհք սրբազան պատրիարքները, վրաց եկեղեցու պատվիրակության ղեկավար տ. Շիո եպիսկոպոսը, տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանը և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի ներկայացուցիչ տիար Էդվարդ Գալստյանը:

Հոբելյանական հանդիսությունը բացվում է, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, խմբովին արտասանված Տերունական աղոթքով և ՀՍՍՀ պետական հիմնի կատարումով:

Այնուհետև Թուրքիայի հայոց ամենապատիվ տ. Շնորհք սրբազան պատրիարքը հանդես է գալիս հետևյալ ողերձով.

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՇՆՈՐՀՔ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԽՈՍՔԸ
(2 հոկտեմբեր 1978 թ.)

Հոբելյար և Սրբազնագույն Կաթողիկոս Ամենայն Հայոց,

Կրկին ինձ կվիճակվի պատիվը և երջանկությունը՝ բացումը կատարելու այս մեծ հանդեսին, Վեհարանի պատկառելի այս դահլիճին մեջ, ինչպես վիճակված էր ինձի բախտը տասը տարիներ առաջ, երբ նույն պայմաններու ներքև և սույն հարկի տակ հավաքված էինք մենք հանդիսավորելու համար Ձերդ Սրբության 60-ամյակը:

Նախ ինձ հսմար մեծ պատիվ է ողջունել ներկայությունը այստեղ բոլորիդ, առաջին հերթին Նորին Սրբություն Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Պիմեն Ա-ին, ինչպես նաև ինձ համար երջանկություն է ողջունել ներկայությունը այստեղ մեր հայրենի կառավարության ներկայացուցիչին՝ հայ եկեղեցվո գործերու խորհուրդի նախագահի տեղակալ պրն. Անդրանիկ Հասրաթյանին, ինչպես նաև բոլոր պետական մեծ հիմնարկներու ներկայացուցիչներուն, մեր թեմական վիճակներու սրբազան առաջնորդներուն և թեմական պատգամավորներուն:

Վեհափառ Տեր, ամբողջ մեր ժողովուրդը, ըլլա Հայաստանի, ըլլա արտասահմանի մեջ, իրենց ներկայացուցիչներով այսօր այստեղ են, իրենց մեծարանքը, իրենց հարգանքը, իրենց սերը և համակրանքը արտահայտելու համար Ձեր ծննդյան 70-ամյակին, ինչպես նաև Ձեր գահակալության 23-րդ տարեդարձին առիթով:

Մենք պետք է ավելցնենք նաև երրորդ պարագա մը, զոր հիշեցուց մեզի Ինք Վեհափառ Հայրապետը այսօր Իր պատարագի, ինչպես նաև այս դահլիճին մեջ Իր օրհնության խոսքի ընթացքին. այսօր միաժամանակ 35-րդ տարեդարձն է Իր քահանայական ձեռնադրության, որ եղավ սկզբնավորությունը և առաջին քայլը, որ առաջնորդեց զԻնքը դեպի Մայր Աթոռ՝ ս. Գրիգոր Լուսավորչի գահը:

Հետևաբար մենք կրնանք ըսել, որ այս երեք առիթներով հավաքված ենք այսօր Վեհարանի այս դահլիճին մեջ:

Մենք եկած ենք, Վեհափառ Հայրապետ, մեր մեծարանքը հայտնելու կյանքի մը, որ ամբողջությամբ ողջակեզ եղած է ծառայության սեղանին վրա, որովհետև ոչ միայն քահանայության Ձեր 35 տարիներու շրջանը ամ-

բողջական նվիրում էր մեծ եկեղեցվո ծառայության, այլ նաև Ձեր նախընթաց 35 տարիներու առավելագույն կեսը անցած է ժողովրդային ծառայության մեջ:

Վեհափառ Հայրապետը 20 տարեկանին նվիրված է մանկավարժական ասպարեզին՝ խանդով, եռանդով ու հոգիով: Մեր համոզումով՝ այդ գործը կարգին կատարողը ուղիղ գծով կառաջնորդվի ու կմտնե եկեղեցական ասպարեզ. մեկը մյուսի կերպով մը շարունակությունն է. ան, որ ուսուցչական ասպարեզի մեջ աշակերտները իրեն կկապե, իր գործին մեջ հոգին կուտա, իր սիրտը կուտա, ոչ միայն գիտություն կջամբե, այլ նաև կշեշտե ուղիղ ու պարկեշտ կյանքի անհրաժեշտությունը, անիկա արդեն իսկ եկեղեցական ըլլալու ճամփուն մեջ մտած է:

Եվ արդարև՝ մեր եկեղեցականության կարևոր մեկ տոկոսը եկած է ուսուցչական ասպարեզեն, և Վեհափառն ալ այդ ճամփով մտած է եկեղեցական ասպարեզ: Վեհափառի այս ճանապարհը մեզի կհիշեցնե Դավիթ մարգարեին կյանքը. պարզ հովիվ մըն էր Դավիթ նախքան մարգարե ըլլալը, նախքան թագավոր ըլլալը, բայց իր ոչխարներուն այնքան կապված էր, զանոնք այնպես կպաշտպաներ գայլերուն դեմ, առյուծներուն դեմ, արջերուն դեմ, որ հաճախ կխորտակեր անոնց գանգերը, իր ոչխարները պաշտպանելու համար: Ու Աստված տեսավ, որ այս նվիրյալ հովիվը, որ քաջությամբ կպաշտպանե իր հոտը, արժանի է իր ժողովուրդին առաջնորդը և թագավորը ըլլալու:

Վեհափառն ալ Իր ուսուցչական ասպարեզին մեջ ցույց տված նվիրումով արժանի կացույց Ինքզինքը հոգևորական ասպարեզին, ուր ևս իբրև վարդապետ և իբրև եպիսկոպոս եկեղեցվո, այնքան նվիրումով, այնքան անկեղծությամբ ու այնքան պարկեշտությամբ Իր պարտականությունը կատարեց, որ ազգը ամբողջ կանչեց զԱյն Լուսավորչի Աթոռին:

Այսօր 23 տարի է, որ Ան կգրավե այդ Աթոռը այնքան արժանավորապես և այնքան արգասավոր կերպով:

Մենք եկած ենք ոչ միայն մեր երախտիքը, մեր գնահատանքը, մեր մեծարանքը արտահայտելու Իրեն, այլև մեր գոհությունը՝ Աստուծո, որ այսպիսի անձնվեր և անշահախնդիր Հովվապետ մը պարգևեց իր եկեղեցվույն:

Կենթադրենք, որ ուրիշներ պիտի անդրադառնան Վեհափառ Հայրապետի մեծագործություններուն և պիտի հիշեն Անոր կյանքի գլխավոր հանգրվանները:

Ես նախորդ անգամ, տասը տարիներ առաջ, ուզած էի մասնավոր կերպով և ընդհանուր գիծերու մեջ շեշտել Վեհափառ Հայրապետի արդյունավոր գործունեության երկու երեսակները. մին՝ այն պայծառ վիճակը, որուն մեջ դրավ Էջմիածնի Մայր Աթոռը, մյուսը՝ այն ժողովրդանվեր գործունեությունը, որ հատկապես ունեցավ այցելելով արտասահմանի գրեթե մեր բոլոր թեմերը, սերտ կապ հաստատեց Մայր Աթոռի եպիսկոպոսներու միջև:

Այսօր ես կուզեմ կանգ առնել ուրիշ կետի մը վրա: Վեհափառ Հայրապետը սքանչելի կերպով իրագործած է ավետարանական ծանոթ մեկ պատգամը. «Տուք զկայսերն՝ կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ»: Սա քրիստոնեական վարչական հիմնական սկզբունքն է: Տալ, ինչ որ կպատկանի կայսեր՝ կայսեր, և տալ, ինչ որ կպատկանի Աստուծո՝ Աստուծո:

Քրիստոնեական եկեղեցին կսպրի, կգործե, իր փրկարար և մարդասիրական նպատակը կիրագործե պետական իշխանության ներքև: Հետևաբար կհարգե բոլոր պետական օրենքները, որքան ատեն որ անոնք հիմ-

նըված են արդարության սկզբունքի վրա: Թերևս ոչ մեկ կրոնք այնքան հարգանք կպահանջե պետական իշխանության նկատմամբ, ինչքան քրիստոնեական կրոնքը, որովհետև կարգ-կանոնը, օրենքն ու արդարությունը Աստուծո կամքն են, և առավելապես պետությա՛ն անկ է, ան՛որ կիյնա զանոնք ի գործ դնելը, իր իրավասության սահմաններու մեջ ինկած աշխարհագրական շրջանակի մեջ: Օրին մեկը Հիսուսի թշնամիները ուզեցին զինքը թակարդի մեջ ձգել՝ սա հարցումը ընելով անոր. «Պե՞տք է կայսեր տուրք տալ, թե՞ չտալ»: Հիսուս հասկցավ անոնց մտադրությունը և պարզապես ըսավ. «Ինչ որ կայսեր կպատկանի՝ կայսեր տվեք, ինչ որ Աստուծո կպատկանի՝ Աստուծոյն տվեք»: Վեհափառ Հայրապետը այդ սկզբունքին սքանչելի կերպով հավատարիմ եղած է ամբողջ իր կյանքի ընթացքին, իմաստնորեն և գործնականապես զայն ի գործ դրած է հատկապես Իր հոգևորական ու հայրապետական պաշտոնավարության ընթացքին և այսպիսով շահած է ամենքին համակրանքը և երախտագիտությունը: Պետության անկեղծորեն հավատարիմ եղած է, ոչինչ զոհելով Իր կրոնական և հոգևորական սկզբունքներեն: Եվ այս պատճառավ այսօր մենք երջանիկ ենք, որ Վեհափառ Հայրապետը ընդհանուր համակրանքի արժանացած է իր պետության և իր ժողովուրդին կողմե:

Պետության հարգանքին և համակրանքին արժանացած ըլլալը այս պահուս իսկ Իր կուրծքին վրա կփայլի սովետական պետության կողմե Իրեն շնորհված «Ժողովուրդներու բարեկամության» շքանշանով: Իսկ ամենքիս ծանոթ է այն խոր սերը և համակրանքը, զոր Ինք կվայելե արտասահմանի մեջ: Այսօր արևածագեն քիչ հետո, երբ առաջին անգամ դուրս ելա, Վեհարանի առջև ինծի ծանոթ անձնավորություն մը տեսա, ողջունեցի և հարցուցի. «Ի՞նչ կընեք առտուն կանուխ այստեղ»: Պատասխանեց. «Հայրենիքի արևը կվայելեմ և հառաջիկա ձմռան համար արևի պաշար կամբարեմ»: Ինք լոնդոնցի էր. և ով որ եղած է Լոնդոնի մեջ, գիտե, թե որքան կարևոր է արևը, հատկապես ձմռան մեջ, երբ հազվադեպորեն կերևի, և այն ալ՝ շատ տկար կերպով: Եվ ապա ավելցուց ծերունազարդ այն գիտակից հայը. «Ես կանուխ պետք է մեկնեի, ժամանակս լրացած էր, ուստի գիս պանդոկեն հանեցին, սակայն ինծի համար անկարելի էր առանց Վեհափառ Հայրապետի 70-ամյակին ներկա ըլլալու մեկնիլ. փառք Աստուծո, որ ընդունվեցա Էջմիածնի նոր վանատունը, ժամանակս երկարաձգվեցավ, և ամեն առավոտ կուգամ այստեղ, Վեհարանի մուտքին, առավոտյան այս ջերմիկ արևը վայելելու: Էջմիածնի վանատան մեջ հյուրընկալվիլս ուրիշ օգուտ մըն ալ ունեցավ: Արտասահմանի մեջ լսած էի, որ Հայրապետի մասին շատ կխոսին, շատ մեծ անձնավորություն մըն է կըսեն: Ու ես քիչ մը չափազանցություն կնկատեի զայն, բայց երբ այստեղ եկա, Էջմիածինը տեսա, անոնց ըսածը քիչ գտա. իսկապես այն համակրանքին, այն հարգանքին ու այն երախտիքին, զոր արտասահմանի մեր հայությունը ունի Իր նկատմամբ, ավելիով արժանի է Վեհափառը: Տեսա Էջմիածինը, հպարտ զգացի ինքզինքս, իսկապես մխիթարված, զորացած կվերադառնամ: Հայրենիքի արևը ամբարած և Էջմիածնի զորությամբը լեցված, ես պիտի վերադառնամ իմ տունս, այնտեղ կյանքիս մնացորդը անցնելու»:

Մենք ալ, Վեհափառ Հայրապետ, նույն ոգիով եկած ենք մեր հայրենիքի արևը, շենշող լույսը վայելելու և առնելու համար Էջմիածնի օրհնությունը և զորությունը: Մեր սրտագին աղոթքն է, որ Աստված ավելի երկար տարիներ Ձեզ հաստատ և անսասան պահե այս Աթոռին վրա: Դուք, Վե-

հափառ Հայրապետ, 70 տարեկան չեք, Դուք մշտնջենական երիտասարդ մըն եք, որովհետև Դուք կծառայեք սրբազան գաղափարի մը, կծառայեք նվիրական իդեալի մը, և իդեալի ու գաղափարի ծառայողը չի ծերանար: Ձեր առույգ ու առողջ վիճակը ինքնին փաստ է այս իրականության:

Ազգովին կշնորհավորենք Ձեր Ս. Օծությունը՝ Ձեր թանկագին կյանքի 70-ամյակի արդյունաշատ հանգրվանին և կաղոթենք, որ Հայոց Հայրապետը երկար տարիներ մնա Իր Աթոռին վրա:

Կեցցե՛ Հայոց մշտական երիտասարդ Հայրապետը, Վազգեն Ա. Սրբազնագույն կաթողիկոսը Ամենայն Հայոց:

Հանուն Գերագույն հոգևոր խորհրդի տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը արտասանում է հետևյալ շնորհավորական խոսքը՝ Հայոց Հայրապետի ծննդյան 70-ամյակի և գահակալության 23-րդ տարեդարձի առիթով.

Տ. ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԽՈՍՔԸ
(2 հոկտեմբեր 1978 թ.)

Այսօր պատմական օր մըն է հայ ժողովուրդի և Հայաստանյայց եկեղեցվո համար, քանզի հավաքված բազմադարյան և սրբազան այս կամարներուն տակ, հայ ժողովուրդը իր բոլոր ներկայացուցիչներով կնշե և կոգեկոչե իր սիրեցյալ Հայրապետին եռյակ հանդիսությունները, Իր կյանքին երեք գլխավոր դրվագները՝ քահանայական ձեռնադրության, հայրապետական Աթոռի բարձրացման և մանավանդ Իր երջանիկ ծննդյան 70-ամյակը: Այսօր ամբողջ հայ ժողովուրդը հարգալից սիրով և խորունկ երախտագիտությամբ կուգա շնորհավորել Ձերդ Վեհափառությունը երկար, երջանիկ տարիներու բարեմաղթություններով, միշտ հոգատ հայ ժողովուրդին և մեր վերածնած հայրենիքին և ի պայծառություն մեր սուրբ եկեղեցվո:

Մեր եկեղեցին առաքելական շրջանեն հետո է, որ ունեցավ 130 հայրապետներ, որոնք մեր ժողովուրդի փոթորկալից կյանքին մեջ, իրենց մտքի շնորհներով, իրենց հոգեկան առաքինություններով, իրենց արի կեցվածքով, իրենց հայրապետական շուքով ուղղություն և նոր նկարագիր տված են մեր ժողովուրդին, անոր մեջ արթնցուցած են ազգային գիտակցությունը, իրենց գործակիցներուն հետ ստեղծած են մշակույթ և արվեստ և մեր ժողովուրդը դարձուցած են առավելաբար հոգիի և միտքի ժողովուրդ: Եվ հայ ժողովուրդը, հոգիի և միտքի ժողովուրդ ըլլալով, կրցած է գրեթե 20 դարեր շարունակ կուրծք տալ բոլոր դժվարություններուն, պահպանել իր ազգային նկարագիրը իր մշակույթի բոլոր երեսներով: Երբ փոքրիշատե խաղաղություն տիրած է մեր աշխարհին, մեր լուսաբնակ հայրապետները դպրոցներ բացած են, վանք, համալսարաններ հիմնած են, գիտնականներ, արվեստագետներ, մտավորականներ հասցուցած են, և անոնց շնորհիվ մեր ժողովուրդը հոգեպես և իմացապես բարձրացած, ամրացած և կուրծք տված է թշնամիներու բոլոր արշավանքներուն և բոլոր դժվարություններուն: Երբ որ ամպեր պատած են մեր սրևոտ երկինքին վրա, երբ ծածկած են Մասիսի ձյունապատ գագաթը, երբ որ մեր հավատքի կեդրոն ս. Էջմիածինը անշքացած է, դարձյալ մեր հայրապետները իրենց նվիրյալ գործակիցներով կամքի տոկունություն և արիություն քարոզած են մեր ժողովուրդին: Նույնիսկ մեր պատմության ամենեն մռայլ շրջաններուն, մեր հովվապետները մեր ժողովուրդին կողքին եղած են, զանոնք քաջալերած, որպեսզի անոնք

կարենան պահպանել իրենց ազգային նկարագիրը և իրենց քրիստոնեական հավատքը:

Վեհափառ Տեր, Դուք այդ հավատավոր, այդ աստվածասեր, այդ արի հայրապետներու կարգին անցած եք մեր եկեղեցական պատմության մեջ, կրնամ ըսել, որ անոնցմե բացառիկներեն եղած եք, Ձեր բազմարդյուն գործերով և Ձեր հովվապետական շնորհներով:

Մեր պատմության մեջ չէ պատահած ոչ մեկ ժամանակ, երբ հայ ժողովուրդը այդպես զանգվածաբար ցրված ըլլա աշխարհի չորս ծագերուն և կտրված ըլլա իր մայր հողեն և իր հավատքի մայր կեդրոնեն՝ ս. Էջմիածնեն: Եղավ ժամանակ ոչ շատ հեռու անցյալին, երբ գրեթե սփյուռք կոչված հայությունը հայրենասիրական կարոտով կայրեր, վասնզի ամբողջությամբ կտրված էր մայր հայրենիքեն և իր հավատքի կեդրոնեն: Դուք եղաք այն նվիրյալ հայրապետներեն մեկը, որ բաժակի մը պես, թերևս խորհրդավոր սկիհի մը պես մեր հավատքի մասունքները բաշխեցիք, հոսեցուցիք արտասահմանի ժողովուրդի սրտին և հոգիին մեջ և զանոնք կապեցիք մայր հայրենիքին և մանավանդ Մայր Աթոռ ս. Էջմիածնին: Ձեզմե առաջ, Վեհափառ Տեր, սփյուռքի հայության համար հայրենիքը և ս. Էջմիածինը, Արարատը և Մասիսը միայն խոսքեր էին, միայն երազանքներ էին: Դուք էիք, որ այդ խոսքերը, այդ երազները շոշափելի իրականության վերածեցիք, եղաք, ինչպես սովորաբար կըսեն, ոսկի կամուրջը մայր հայրենիքի և արտասահմանի միջև: Նաև բացառիկ կերպով պայծառացուցիք, շքեղացուցիք մեր եկեղեցիները, մանավանդ Մայր Աթոռ ս. Էջմիածինը: Թերևս ամբողջ մեր պատմության ընթացքին Մայր Աթոռ ս. Էջմիածինը արտաքնապես այնչափ ծաղկյալ, այնչափ բարգավաճ և այնչափ գեղեցիկ եղած չէ. և ասիկա եղավ, վասնզի թե՛ հայրենի կառավարությունը և թե՛ արտասահմանի մեր ժողովուրդը անհուն վստահություն ունեին Ձեր սրբազնասուրբ նկարագրին, հայ ժողովուրդին և հայ եկեղեցիին հանդեպ, Ձեր անկաշառ նվիրումին, Ձեր մտքին և հոգիին շնորհներուն: Պայծառացավ, շքեղացավ Մայր Աթոռ ս. Էջմիածինը իր շուրջ գտնվող և մայր հայրենիքի մեջ գտնվող գործող բոլոր եկեղեցիներով: Երևանի թե այդ գործող եկեղեցիներուն թիվը ասկե հետո քիչ մը ավելի շատնար, որպեսզի մեր քրիստոնեական հավատքին լույսը ուղղակի մեր մայր հայրենիքի կուրծքին վրա շինված վանքերեն և եկեղեցիներեն հոսեր դեպի արտասահման: Եվ այդ հավատքին լույսը որչափ ուժգին հոսի հայրենիքեն դեպի արտասահման, որչափ զորավոր ըլլա այդ հավատքը արտասահմանի հայության մեջ, արտասահմանի հայությունը այնքան ավելի կապված կզգա ինքզինքը Մայր Աթոռով մայր հայրենիքին և ամբողջ հայության:

Վեհափառ Տեր, Ձեզմե առաջ գրեթե մոռցված էր, թե ս. գրական, պատմական Հայաստանի մեջ գոյություն ունի քրիստոնեություն մը, գոյություն ունի ամբողջ քրիստոնեության առաջին կառուցված եկեղեցին՝ ս. Էջմիածինը, գոյություն ունի հավատավոր և քրիստոնյա ժողովուրդ մը: Դուք, Վեհափառ Տեր, Ձեր անձին հմայքով, Ձեր բեղմնավոր գործունեությամբ, մանավանդ Ձեր հովվապետական այցելություններով ճանչցուցիք հեռավոր Ամերիկայեն մինչև Եվրոպայի զանազան մասերը, թե հայ ժողովուրդը աշխարհի առաջին քրիստոնյա ժողովուրդն է, թե քրիստոնեական հավատքը կենդանի է հայ ժողովուրդի մեջ՝ ի մայր հայրենիք, թե պայծառ և շեն է Մայր Աթոռ ս. Էջմիածինը: Այսպես է, որ հայ ժողովուրդի և հայ եկեղեցվո անունը բարձրացավ և միջազգային մակարդակներու հասավ: Այս բոլորին համար, Վեհափառ Տեր,

ամբողջ հայությունը, թե՛ մայր հայրենիքի և թե՛ արտասահմանի մեջ մանավանդ, երախտապարտ է Ձեզի: Դուք մեր մեծագործ, ինչպես ըսվեցավ, սքանչելագործ հայրապետներու կարգին անցաք մեր պատմության մեջ, հայ ժողովուրդը, հայոց պատմությունը և հայ եկեղեցին բնավ չպիտի մոռնան այն երախտիքը, որ Դուք մատուցիք անոնց: Այդ բոլորին համար, Վեհափառ Տեր, սրտագին կշնորհավորեմ Ձեր քահանայագործության 35-ամյակը, Ձեր հայրապետության 23-րդ տարեդարձը և մանավանդ Ձեր երջանիկ ծննդյան 70-ամյակը: Ապրիք, երկար ապրիք, յոթն անգամ յոթանասուն ապրիք, ինչպես կըսե Ավետարանը: Որչափ որ Ձեզի Աստված կյանք տա, ապրիք և այս ձևով պայծառացնեք մեր եկեղեցիները, հավատքով զորացնեք հայ ժողովուրդը և հայկական ոգիով ու նկարագրով ամրացնեք ամբողջ հայությունը:

Վեհափառ Տեր, ամբողջ հայ ժողովուրդը ուրախ և հպարտ է, որ Ձեր այս բազմարդյուն և բազմակողմանի գործունեությունը աննշմար չանցավ նաև Սովետական Միության վերին ղեկավարության կողմե, ան ևս մասնակից եղավ այս հանդիսություններով Ձերդ Վեհափառության շնորհելով «Ժողովուրդներու բարեկամության» այնքան բարձր և պատվավոր շքանշանը: Հայաստանյայց եկեղեցվո Գերագույն հոգևոր խորհուրդն ալ, որ մեր եկեղեցվո վարչական վերին մարմինն է և կներկայացնե ամբողջ հայ ժողովուրդը, թույլ տվեք, որ, հանուն հայ եկեղեցվո և հայ ժողովուրդին, Ձեզի նվիրե այս խորհրդանշական փոքրիկ եկեղեցական շքանշանը՝ հայրապետական այս պանակեն, կրեցեք զայն Ձեր կուրծքին որպես արտահայտություն իր սիրույն, հարգանքին և որդիական հավատարմության հանդեպ Ձեր անձին և Մայր Աթոռ ս. Էջմիածնին:

Թող բարին Աստված Ձեզի շնորհե երկար, շատ երկար տարիներ՝ ի պայծառություն Հայաստանյայց եկեղեցվո և իր հավերժական փառքին համար:

Վեհափառ Հայրապետի ծննդյան 70-ամյակի և գահակալության 23-րդ տարեդարձի առիթով Գերագույն հոգևոր խորհուրդը պատրաստել էր տվել ականակուռ և թանկարժեք հայրապետական մի պանակ՝ հանուն մեր եկեղեցու և համայն հայ ժողովրդի՝ իբրև որդիական երախտագիտության և սիրո արտահայտություն:

Իր խոսքի ավարտին տ. Սերովբե արքեպիսկոպոսը, ներկաների սրտագին ծափողջույնների ներքո, պանակով զարդարում է Հայոց Հայրապետի կուրծքը:

Հանուն Հայաստանի կառավարության և ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի, տիար Անդրանիկ Հասրաթյանը ընթերցում է հետևյալ ողջույնի խուքը.

ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ՏԻԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՍՐԱԹՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

(2 հոկտեմբեր 1978 թ.)

Ձերդ Սրբություն,

Թույլ տվեք ջերմորեն ողջունել Ձեզ Սովետական Հայաստանի կառավարության, հայ եկեղեցու գործերի խորհրդի և անձամբ իմ կողմից Ձեր ծննդյան 70-ամյակի և կառավարական բարձր պարգևի առթիվ:

Ուրախալի է, որ այսօր հանդիսավորությամբ նշվում է Ձեր ծննդյան 70-ամյակը, հանդիսավորությամբ է նշվում, որովհետև Ձեր ողջ կյանքն անցել է հարազատ ժողովրդին ծառայելու ազնիվ գիտակցությամբ:

Ձեր գործունեությունը սկսվել է ուսուցչական ասպարեզում: Հայոց լեզուն, գիրն ու գրականությունը Ձեր մեծ հավատքի էությունն են կազմել:

Հետագայում Դուք անցել եք հայ եկեղեցուն ծառայելու գործին:

Ձեր գահակալության 23 տարիները խոշորագույն իրադարձություն են ազգային-հոգևոր կյանքում, հայ եկեղեցու պատմության մեջ:

Արտակարգ մեծ է Ձեր հայրենասիրական, ինչպես և խաղաղասիրության ու ժողովուրդների բարեկամության ասպարեզում ծավալած գործունեությունը, որը լայն ճանաչում ունի ամենուրեք:

Որպես Ամենայն Հայոց կաթողիկոս, այսօր Դուք վայելում եք ողջ աշխարհի հայության սերն ու հարգանքը: Անսահման եռանդով Դուք կարողացաք համախմբել աշխարհով մեկ ցրված հայությանը հայ եկեղեցու շուրջ: Դա մեծ խթան հանդիսացավ, որպեսզի ստիպուտքի հայությունը էլ ավելի մոտիկից ճանաչի իր հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, հայոց լեզուն, գիրն ու գրականությունը:

Հաճելի է, որ Ձեր ծննդյան 70-ամյակը նշվում է այն ժամանակ, երբ հայ ժողովուրդը լայնորեն տոնում է Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միավորվելու 150-ամյակը: Անսահմանն մեծ է այդ իրադարձության պատմական նշանակությունը: Հայ ժողովուրդը իր բախտը, իր ճակատագիրը հավերժ կապեց Ռուսաստանի, ռուս մեծ ժողովրդի հետ:

Մենք երախտագիտության ջերմ զգացումով ենք նշում Ներսես Աշտարակեցու և Էջմիածնի հոգևորականության ակտիվ գործունեությունը ռուսական բանակին ամենուրեք օժանդակելու՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միավորելու գործում:

Ռուս ժողովրդի օգնությամբ է, որ 1920 թվականին ստեղծվեց հայոց նոր պետականությունը՝ Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը:

Այսօր Հայաստանը հզոր Սովետական Միության առաջավոր հանրապետություններից մեկն է իր զարգացած արդյունաբերությամբ, գիտությամբ ու մշակույթով:

Մենք մի առանձին գոհունակությամբ կուզենայինք նշել, որ հայոց եկեղեցին, նրա կենտրոն Էջմիածինը Ձեր ջանքերով և հմուտ ղեկավարությամբ վերջին երկու տասնամյակում հսկայական հաջողությունների է հասել շինարարության, պատմական հուշարձանների վերականգնման, աշխարհի ողջ հայությանը Էջմիածնի և մայր հայրենիքի շուրջ համախմբելու ասպարեզում:

Մեզ բոլորիս ուրախություն է պատճառում, որ Դուք քրիստոնյա աշխարհի ամենաճանաչված և հեղինակավոր դեմքերից մեկն եք:

Ինձ համար հաճելի է նշել, որ Սովետական Հայաստանի կառավարությունը բարձր է գնահատում Ձեր գործունեությունը ինչպես հայրենիքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Ես չեմ կարող չնշել նաև, որ Ձեր ազնիվ հայրենասիրական ու խաղաղասիրական գործունեությունը արժանացել է սովետական հասարակայնության և սովետական կառավարության բարձր գնահատականին, որի փայլուն ապացույցն է Սովետական Միության Գերագույն սովետի նախագա-

հության հրամանագրով Ձեզ «Ժողովուրդների բարեկամության» շքանշանով պարգևատրելը:

Մեզ համար ուրախալի է, որ այդ հրամանագիրը ստորագրել է ժողովուրդների բարեկամության, խաղաղության խոշորագույն գործիչ, սովետական պետության ղեկավար Լեոնիդ Իլյիչ Բրեժնևը:

Ինձ պատիվ է շնորհված ընթերցելու և հանձնելու Ձեզ Սովետական Հայաստանի կառավարության ողջույնի ուղերձը Ձեր ծննդյան 70-ամյակի և բարձր պարգևի առթիվ:

Ձերդ Սրբություն, կրկին ու կրկին ողջունելով Ձեր ծննդյան 70-ամյակը, ցանկանում եմ Ձեզ երկար տարիների կյանք՝ ի փառս հայրենիքի և Էջմիածնի նորանոր հաջողությունների:

Պրն. Անդրանիկ Հասրաթյանը հրապարակում է ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆ. Սարգսյանի ողջույնի ուղերձը, որը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 22):

Այնուհետև ողջույնի և շնորհավորանքի խոսքով առաջինը հանդես է գալիս Մոսկվայի և Համայն Ռուսաստանի ռուս պրավոսլավ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն Տ. Պիմենը:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ՊԻՄԵՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

(2 հոկտեմբեր 1978 թ.)

Ձերդ Սրբություն,

Մեծահարգ պարոն Ա. Հասրաթյան, Հայաստանի Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ,

Թանկագին հոգևոր եղբայրներ,

Մեծահարգ ներկաներ,

Մենք հավաքվել ենք այստեղ, որպեսզի կիսենք մեր հայ եղբայրների ու քույրերի ուրախությունը և եղբայրաբար ողջունենք մեր թանկագին հոբելյար Հայոց կաթողիկոս Նորին Սրբություն Վազգեն Ա.-ին՝ Իր ծննդյան 70-ամյակի առթիվ, և ջերմորեն մաղթենք Նրան բազմաթիվ և բազմաբեղուն տարիների կյանք:

Իր կյանքը նվիրաբերելով աստվածային փառքի ծառայությանը և սեփական ժողովրդի բարօրությանը, Նորին Սրբություն Վազգեն կաթողիկոսը կրոնական ծառայության 35 տարիների ընթացքում արժանավորապես բազմապատկեց Աստուծո կողմից շնորհված Իր բազմակողմանի տաղանդը: Արդեն 23 տարի է, ինչ Նորին Սրբությունը անխոնջ կերպով, ինքնազոհողությամբ ու հաջողությամբ կատարում է կրոնապետի Իր պարտականությունները, որոնց շնորհիվ լայն ճանաչում և խորին հարգանք է ձեռք բերել ամբողջ աշխարհի կրոնական շրջանակներում:

Եկեղեցական նավի իմաստուն նավապետը, բոլոր հայերին ազգային-կրոնական օջախի շուրջ համախմբողը՝ Նորին Սրբություն Վազգեն Ա.-ն, միաժամանակ ականավոր գործիչ է հանդիսանում էկումենիկ և խաղաղասիրական ասպարեզներում: Մենք մեծ ոգևորությամբ ընդունեցինք այն լուրը, որ մեր երկրի կառավարությունը, բարձր գնահատելով Ձերդ Սրբության հայրենասիրական և խաղաղասիրական գործունեությունը, պարգե-

վատրել է Ձեզ «Ժողովուրդների բարեկամության» շքանշանով: Մենք սրբոտագինս ողջունում ենք Ձեզ այդ պարգևի համար:

Մենք բարձր ենք գնահատում Նորին Սրբության ջանքերը հայ առաքելական և ռուս պրավոսլավ եկեղեցիների միջև եղբայրական փոխհարաբերությունների ամրապնդման գործում և մեր կողմից ձգտում ենք անել այն ամենը, ինչ հնարավոր է՝ ամրապնդելու փոխըմբռնումն ու համագործակցությունը մեր միջև: Մենք հաջողությամբ գործակցում ենք միմյանց էկումենիկ շարժման ասպարեզում, այդ թվում Եկեղեցիների համաշխարհային խորհրդում, գործակցում ենք ժողովուրդների միջև խաղաղության ամրապընդման ուղղությամբ ձեռնարկվող համաքրիստոնեական, հատկապես «Խաղաղության քրիստոնեական կոնֆերանս»-ի միջոցառումներին: Երկար տարիների ընթացքում Նորին Սրբությունը գործարար մասնակցություն է բերում միջկրոնական խաղաղասիրական գործունեությանը ինչպես մեր, այնպես էլ այլ երկրներում:

Դրա ցայտուն վկայությունը կարող է լինել «Կրոնական գործիչները հանուն կայուն խաղաղության, զինաթափման և ժողովուրդների միջև արդարացի հարաբերությունների» նշանաբանով անցկացված համաշխարհային կոնֆերանսը, որը տեղի ունեցավ Մունկվայում 1977 թ. հունիսին: Նորին Սրբությունը պատվավոր նախագահներից մեկն էր այդ կոնֆերանսի, և մենք արդարորեն պետք է հայտարարենք, որ հայ առաքելական եկեղեցին շատ բան արեց այդ կոնֆերանսի նախապատրաստման և հաջող անցկացման համար:

Նշանակալից է այն, որ Նորին Սրբություն Վազգեն կաթողիկոսի հոբելյանական տարում մենք նշում ենք նաև հայ ժողովրդի և նրա եկեղեցու պատմության մի նշանակալի տարեթիվ՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելու 150-ամյակը: Մենք գիտենք, թե ինչպիսի արտակարգ կարևոր նշանակություն ունեցավ հայ ժողովրդի և նրա եկեղեցու համար այդ իրադարձությունը: Այն հայ ժողովրդին փրկեց ազգային և կրոնական բազմադարյան օտարերկրյա ճնշումից: Այդ նախախնամական իրադարձությամբ հայ ժողովուրդը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության շնորհիվ հնարավորություն ստացավ ստեղծելու իր ազգային պետությունը, որը հանդիսանում է լիիրավ անդամ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների միության:

Արդեն 58 տարի է, ինչ հայ ժողովուրդը, ռուս և սովետական մյուս ժողովուրդների հետ, ազատ կերպով ու ոգեշնչված կառուցում է իր կյանքը: Գտնվելով ձեր գեղեցիկ հանրապետությունում, մենք ականատես ենք հայ ժողովրդի աշխատասիրության և տաղանդի հիանալի արդյունքներին:

Ձերդ Սրբություն, մենք ուրախ ենք, որ հոբելյանական այս օրերին գտնվում ենք Ձեզ հետ: Ամբողջ հոգով ցանկանում ենք Ձերդ Սրբությանը քաջառողջություն, երկար տարիների կյանք՝ հուրախություն Ձեր բազմաթիվ երկրպագուների ամբողջ աշխարհում, հետագա սրբազան ու օրհնաբեր ծառայություն Հայաստանի եկեղեցուն և ժողովրդին:

Հանուն վրաց օրթոդոքս եկեղեցու Պետ, Նորին Սրբություն Տ. Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսի, խոսք է առնում տ. Շիո եպիսկոպոսը, որը հրապարակում է վրաց Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսի ուղերձը.

ՎՐԱՑ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԻԼԻԱ Բ-Ի ԽՈՍՔԸ

Ի խորոց սրտի ցավում ենք, որ ներկա չենք կարող գտնվել այնպիսի արժանահիշատակ ու սրտառուչ տոնախմբությունների, ինչպիսիք են Ձեր ծննդյան յոթանասունամյակը և սրբազան հովվապետության արգասաբեր քսաներեք տարիները ու Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելու հարյուրհիսունամյակը: Ձենք կարող ներկա լինել այն հասկանալի պատճառով, որ սեպտեմբերի 30-ին առաջին անգամ Վրաց աշխարհի առաքելական եկեղեցում է հյուրընկալվելու Ամերիկայի և Կանադայի սրբազան Թեոդոս միտրոպոլիտը:

Սակայն Մենք անսահման ուրախ ենք, որ Աստուծո շնորհած ողորմածությամբ հաղթահարված է մեր միջև եղած տարաձությունը, և Մենք հոգով ու սրտով ներկա ենք Ձեր յոթանասունամյակի հանդիսություններին:

Մեր պատվիրակության միջոցով, որին ղեկավարում է Նորին Սրբազնություն Աձղուրիի և Նիկորձմինդայի Ճիո եպիսկոպոսը, մենք մեր հոգու ապրումները, սերն ու բերկրանքը միացնում ենք հայ ժողովրդի իղձերին և մաղթում լավագույն ցանկություններ հայ առաքելական եկեղեցուն և Ձերդ Վեհափառությանը:

Մեր ազգերը և մեր եկեղեցիները շաղկապված են իրար, և մենք դարերի ընթացքում հաճախ ենք միացյալ ուժերով պայքարել օտար զավթիչների դեմ:

Մեր ժողովուրդներն ու մեր եկեղեցիները իրոք պետք չէ մոռանան այն, ինչ անցյալ է, որպեսզի անցյալ բարության վրա կառուցեն մեր եղբայրական փոխհարաբերությունները:

Ամեն բան այս աշխարհում ստեղծված է Աստուծո ողորմածությամբ, և բոլոր ազգերը պետք է փոխադարձաբար կապված լինեն իրար հետ եղբայրության սիրով և խաղաղությամբ, որից և պետք է ծնունդ առնի մեր պայծառ ապագան:

Մենք հավատացած ենք, որ Ռուսաստանի հետ Հայաստանի միավորվելու 150-ամյակից հետո աշխարհը անպայման պետք է վերածվի ժողովուրդների եղբայրության և սիրո արբաստրբ տաճարի, և Վրաստանն ու Հայաստանը պետք է ցնծան այդ տաճարում և ծլարձակվեն ինչպես վարդի թուփը հսկա կաղնու հովանու ներքո:

Մեր երկրների երկու ժողովուրդները պատմության դաժան քառուղիներում միշտ միասին են եղել և փորձությամբ լեցուն բախտի առջև իրենց ցավերն ու վերքերը համարել են իրենց սեփականը: Մեզ միմյանց ոչ միայն հողն է մերձեցնում, այլ նաև պատմական անցյալը և ապագայի մշակութային կապերը: Ուստի մեր ժողովուրդների և եկեղեցիների միությունը և սերը պետք է ընթանան դեպի վեհություն և կատարելություն:

Եղածով բավարարվել և մի կետի վրա մնալ՝ անհանդուրժելի է, և Մենք միշտ հուսով ենք, որ Հայաստանյայց առաքելական եկեղեցին և անձամբ Ձերդ Վեհափառությունը բոլոր միջոցները կձեռնարկեք, որպեսզի ըստ մեր ցանկության և Աստուծո սրբությամբ ու զորությամբ մեր քրիստոնեական կապերը տարեց-տարի ամրապնդվեն ու զորանան:

Հայաստանյայց եկեղեցում Ձերդ Վեհափառության 23 տարվա արգասավոր գործունեությունը առավել է պայծառացնում Ձեր 70-ամյա կյանքը:

Ձերդ Սրբություն Վազգեն Առաջին, Վրաստանի առաքելական եկե-

ղեցին և վրաց ժողովուրդը ծանոթ է Ձեր գործունեությանը, Ձեր անխոնջ աշխատանքին, որ Դուք կատարել եք հայկական եկեղեցու տնտեսական և հոգևոր կյանքը մի նոր աստիճանի բարձրացնելու համար:

Մենք հավատացած ենք, որ Ձեր անունը քրիստոնեական աշխարհի պատմության մեջ կգրվի ոսկե տառերով, որպես Ձեր ազգի և եկեղեցու համար մարտնչող ազնիվ զինվորի:

Մեր եկեղեցու բոլոր զավակները և վրաց ազգը շնորհավորում են Ձերդ Սրբությանը՝ ծննդյան յոթանասունամյակի և հայրապետական բարձր գահի վրա գտնվելու 23 տարիների առթիվ:

Հղում ենք Մեր աղոթքը ամենազոր Աստծուն, որպեսզի նրա զորությունն ու ողորմածությունը հավիտյան պահպանի Հայոց եկեղեցին և Ձեր աստվածօրհնյալ հայրապետությունը՝ ի փառս Հայաստանյայց եկեղեցու:

Երևանի ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարանի տեսչության, գիտական խորհրդի և Մատենադարանի ողջ անձնակազմի անունից շնորհավորանքի հետևյալ ջերմ խոսքն է ընթերցում Մատենադարանի տնօրեն, ակադեմիկոս Լևոն Խաչիկյանը:

ԵՐԵՎԱՆԻ Ս. ՄԵՍՐՈՊ ՄՈՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՁԵՌԱԳՐԱՑ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ ԼԵՎՈՆ ԽԱՉԻԿՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ՈՒՂԵՐՁԸ

(2 հոկտեմբեր 1978 թ.)

Առ ազգընտիր եւ ազգանուէր Հայրապետն
Տ. Տ. Վազգէն Ա կաթողիկոսն Ամենայն Հայոց

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ

Զամենախորին գոհունակութիւնս ունիմք ի հաստատել, եթէ ազգն հայոց անվրէպ ընտրութեամբ կացոյց զանձն Ձեր ի վերայ այսր Սրբազան Աթոռոյ:

Ուրախութիւն մեր մեծ է յիրաւի ի վկայել, եթէ յանձին Ձերոյ որպիսի՜ արժանաւոր ժառանգաւորս ունիմք հայրենաշէն խոկմանց եւ ազգանորոգ յոյզից նախնեաց մերոց երախտաւորաց:

Յընթացս բազմամեայ գործավարութեանն Ձերոյ եղէք իսկ եւ իսկ իմաստուն, քաջակորով եւ անձնդիր Հովուապետ, որ միանգամայն ունի զկերպ մտածման պետական վիճակի, միամիտ եւ միակամ է ընդ հայրենի կառավարութիւնս՝ յամենայն ազգօգուտ ձեռնարկութիւնս նորին, զի եւ ազգն մեր լիցի ամփոփեալ ի վերայ հողոյն միակ եւեթ հայրենեաց իւրոց, ընդ ապահով եւ հզօր իշխանութեամբ իւրոյ հարազատ պետութեանն:

Ո՞չ ըստ այսմ եւեթ անդուլ ջանիւք առաքէք զբան պատգամի սրտի եւ հոգւոյ Ձերոյ առ ամենայն բեկորս ազգիս՝ առ ի յանկանել յուղի դէպ ի տունն հայրենական, եւ ո՞չ ապաքէն առ այդ առնէք զցուցն հովուապետական՝ այցելու եղեալ զաւակաց Ձերոց որ ի Հնդիկս, յԵգիպտոս, յԵրուսաղէմ, ի զոյգ Ամերիկայս, յԵւրոպիայ, Թուրքիայ եւ յայլուր:

Ընդ Ձեզ ցնծայ եւ հօտն հաւատացելոց Ձերոց յորժամ հաւաստէ, եթէ առաւել քան երբեք բարեխնամ եւ բարեկարգ է Մայր Աթոռն ս. Էջմիածնի, կեայ եւ գործէ ազգաշէն եւ հայրենանուէր կենօք:

Շնորհիւ զգաստ իմաստութեան Ձերոյ Վեհափառութեան՝ զսփիւռքն

ընդ արեւաշող հայրենեաք շաղկապեալ ոգեղէն կամուրջն ընդարձակագոյնս արձակէ զշարս կամարաց իւրոց ընդ հովանեաւ սրբոյ Էջմիածնի:

Լոյս եւ դարձեալ լոյս սիրէք ջամբել զաւակաց Ձերոց կարօտելոց, զի ոչ առյաւէտ կորնչիցին ընդ մոլորեցուցիչ բաւիղս ճանապարհաց անիծապարտ օտարութեան:

Ոչ ինչ, եթէ միայն անշիջանելի հուրն անծայրածիր սիրոյն առ հայրենիս եւ առ հարազատ զաւակունս կարէ թելադիր լինել այսքանեաց ջանից եւ նուիրմանց Ձերոց, որոց ի տրիտուր, ոչ ունիմք տարակոյս, եթէ ժողովուրդն Հայոց անպայման հատուցէ Ձեզ լիառատ երախտիւք իւրովք:

Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարանի գրաբար ուղերձը

Պատիւ Ձեր է եւ հպարտութիւն ողջոյն ժողովրդեանն մերոյ, զի անչափ հոգատար լինիք ոչ միայն առ մերային ազինս, վասն նոցին միայն եւեթ խաղաղական կենաց, երջանիկ բարօրութեան եւ լուսապարար ապագայից, այլեւ յաղագս հանուրց ազգաց ամենայնից, զի կորնչիցին պատերազմունք, կոտորածք եւ աւերածութիւնք, լիցի ճշմարիտ «խաղաղութիւն ամենեցուն», թագաւորեսցեն սէր եւ միաբանութիւն ի վերայ աշխարհին, մարդ ընդ մարդոյ վարեսցի որպէս եղբայրն ընդ եղբօր, «եղիցի լոյս» եւ միայն «լոյս եղիցի»:

Շնորհազարդ Հայրապետ, որպիսի ջերմեռանդ գուրգուրանօք խնամածու եւ կենդանարար լինիք առ ամենայն հնամենի բեկորս ոգեղէն եւ մտաւոր արարմանն ազգիս Հայկազեան: Ընդ թեւովք Ձերովք ժողովէք ոչ միայն զանկրկնելի գրչագիր մատեանս, ոչ միայն զանգին նմուշս հրաշագունից քանքարաց ոսկերչաց մերոց եւ արծաթագործաց, ոչ միայն զլիով էութեամբ հայատոհմիկ խաչքարս, զպէսպէս ասեղնագործութիւնս եւ զայլս զայսպիսիս, այլ եւ նորոգեալ նորոգէք զփլուզեալ վանս, զեկեղեցիս, զշիրիմս բազմ-

երախտ զաւակաց ազգիս, զի յետ այսու եւս կոթողեալ մնան իբրեւ նշխարս հանճարոյն նախնեաց մերոց եւ իբրեւ աճիւնս նոցին:

Առ այս տունս Մաշտոցի՝ Մատենադարանն եւ սպասաւորքն նորին, որք զպարտիս եւ զպարտականութիւնս ունին քննախուզել նաեւ զանցեալն եւ զներկայն Հայաստանեայց եկեղեցւոյ, կրկին բերեն զհաւաստիս համոզման իւրեանց եւ զվկայութիւնս, եթէ բազումք են գործք բարեաց գործելոց ընդ կամարօքն սրբոյ Էջմիածնի. նաեւ վասն ազատութեան հայրենեաց մերոց ի ձեռաց այլազգի եւ անօրէն բռնակալաց:

Տէր Վեհափառ. ընկալայք զհաւաստիս անպարագիծ մերոց հիացմանց եւ վասն այնր սիրոյն, գուրգուրանաց եւ եռանդեան, զորս տածէք առ ազգատոհմիկ մակացութիւնս մեր, դպրութիւնս, արուեստս եւ առ համօրէն երախտաւոր մշակս: Բազում հեղս մի ընդ միոյ եղեալ էք նուիրատու եւ նուիրաբեր գրչագիր մատենից, որք են ընտիրք ի մէջ ընտրելոց եւ որք բազմապատիկս յաւելուն զմեծութիւն եւ զարժանիս ձեռագրակպն ժառանգութեան ողջոյն Մատենադարանի:

Ցառիթ եւ ի շնորհաւորումն եւթանասնամեայ Ձերոյ փառապանծ յոբելինի, պարգեւման պետական բարձր նշանի՝ «Վասն բարեկամութեան ի մէջ ժողովրդոց» եւ յաղագս սոցին ամենեցուն՝ Վեհափառութեանդ Ձերում մատուցանեմք զսրտաբուխ մաղթանս քաջառողջութեան, արեւշատութեան եւ երջանիկ կենաց՝ յուրախութիւն ազգիս եւ ի պայծառութիւն հայրենեաց մերոց:

Ի ԴԻՄԱՑ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆՆ ՄԱՇՏՈՑԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ՝

ԼԵՒՈՆ ՈՐԴԻ ՍՏԵՓԱՆԻ ԽԱՉԻԿԵԱՆ

ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԳԼԽԱՎՈՐ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՇՈՏ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

(2 հոկտեմբեր 1978 թ.)

Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոս
Վազգեն Ա-ին

Ձերդ Սրբություն,

Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր գլխավոր արխիվային վարչության և պետական կենտրոնական արխիվների աշխատողների կողմից սրտանց շնորհավորում ենք Ձեզ՝ Ձեր ծննդյան 70-ամյակի և կառավարական բարձր պագնի արժանանալու առթիվ:

Ձեր կյանքի վերջին 23 տարիները անցել են սուրբ Էջմիածնում, որպես Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոս: Այդ տարիները շնորհավորվել են բազմակողմանի և բեղուն ազգօգուտ գործունեությամբ. հոյակապ թանգարանների ստեղծում, վեհաշուք նոր շենքեր, արմատական վերակառուցումներ, բարեկարգումներ, սփյուռքահայ օջախների հետ սերտ կապերի ստեղծում, արժեքավոր հրապարակումներ և բազում այլ նախաձեռնություններ, որ արդյունք են Ձեր անձնական տաղանդի և տքնությունների, ըստ էության մեծ դեր խաղացին և կխաղան մեր ժողովրդի գոյատևման ու համախմբման գործում: Մեծ են Ձեր ծառայությունները խաղաղության համար մղվող պայքարում: Մենք երախտապարտ ենք նաև Ձեր անհանգստու-

թյունների և բարի գործերի համար մեր ժողովրդի պատմական օջախների՝ պետական արխիվների հարստացման գործում դրսևորած օգնության համար:

Արդի և գալիք սերունդներն ըստ արժանվույն կգնահատեն Ձեզ, որպես հայ եկեղեցու պատմության մեջ ամենաառաջավոր և լուսավոր գործիչներից մեկը:

Շնորհավորելով Ձեզ, բարեմաղթում ենք երկար տարիների կյանք, ստեղծագործական նոր պտղոս, ավյուն, կամք և ամեն տեսակի հաջողություններ:

Հանդիսության ժամանակ արտասանվեցին նաև հետևյալ ողջույնի խոսքերը:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանը, հանուն Կոմիտեի նախագահության, նույնպես ջերմորեն շնորհավորում է Հայոց Հայրապետին հետևյալ ուղերձով:

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ ՎԱՐԴԳԵՍ ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ (2 հոկտեմբեր 1978 թ.)

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն ջերմորեն շնորհավորում է Ձերդ Սրբազնության ծննդյան 70-ամյակը:

Դուք որպես Էջմիածնի Մայր Աթոռի գահակալ՝ Ձեր ժողովրդանվեր և հայրենանվեր գործունեությամբ հանդիսացաք արժանավոր հաջորդը երջանկահիշատակ Մեծն Ներսեսի, Ներսես Շնորհալու, Ներսես Աշտարակեցու և Խրիմյան Հայրիկի՝ բազում հիշատակության արժանի գործերով բարձրացնելով Մայր Աթոռի հեղինակությունը:

Վեհափառ Տեր, Ձեր գահակալության շրջանը համընկավ մեր ժողովրդի համար երջանիկ և խաղաղ մի ժամանակաշրջանի, մեր հայրենիքի աննախընթաց բարգավաճման և վերելքին առընթեր ծաղկման փայլուն մի շրջան բոլորեց նաև Էջմիածնի Մայր Աթոռը:

Դուք Ձեր ձեռներեց ոգով և նվիրումով կարողացաք շինարարական մեծ ծրագրեր իրագործել՝ վերականգնելով և բարեկարգելով մի շարք պատմական արժեքավոր հուշարձաններ, վայելելով աշխարհով մեկ ցրված հայ հավատացյալների անվերապահ սերը, վստահությունն ու աջակցությունը:

Սփյուռքահայությունը Ձեր անձի մեջ տեսնում է ոչ միայն Մայր Աթոռի առավել ծաղկման նախանձախնդիր հոգևոր իր առաջնորդին, այլ նաև իր բազում հոգեմաշ դժվարություններով տագնապող եկեղեցական մի մեծ գործչի, որ անում է հնարավոր ամեն ինչ՝ սատարելու տարերկրի հայության գոյատևման պայքարին՝ գոտեպնդելով նրան մայր հայրենիքի և Էջմիածնի Մայր Աթոռի սիրով և իր հովվական հովանին տարածելով նրա վրա:

Ձեր հայրական հոգատարության արտահայտություններից է, թվելու համար միայն մեկը, լիբանանահայ աղետյալ գաղութին Ձեր ընձեռած օգնությունը անձնական հատկացումներով և Ձեր նախաձեռնած հանգանակության միջոցով:

Վեհափառ Տեր, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հիմնադրության օրից, Դուք ընտրվել եք կոմիտեի անդամ և Ձեր թան-

կագին աջակցությունն եք բերել հայրենիք-սփյուռք կապերի զարգացման գործին:

Լինելով եկեղեցական մեծ գործիչ՝ Ձեզ միշտ էլ մտահոգել է ժողովուրդների խաղաղ գոյակցության, մեր մոլորակի մշտական խաղաղության



Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ուղերձի շապիկը

խնդիրը, և Դուք Ձեր նշանակալի լուման եք ներդրել այս նվիրական գործում: Որպես Խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի անդամ, Դուք Ձեր եռանդուն և բոլորանվեր մասնակցությունն եք բերել բոլոր այն միջոցառումներին, որոնք նպաստում են աշխարհում խաղաղության

ամրապնդմանը: Սովետական կառավարությունը բարձր է գնահատել Ձեր գործունեությունը հանուն խաղաղության, հանուն ժողովուրդների բարեկամության: Դրա վառ արտահայտությունն է այն բարձր պարգևը՝ «Ժողովուրդների բարեկամության» շքանշանը, որ շնորհվեց Ձեզ Ձեր յոթանասունամյակի առթիվ սովետական կառավարության կողմից:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն Ձեր գահակալության շրջանում, տարբեր բարեպատեհ առիթներով, Ձեզ շնորհավորել և քաջառողջություն ու արևշատություն է մաղթել:

Այժմ, շնորհավորելով Ձեզ Ձեր յոթանասունամյակի առթիվ, մենք մեր բարեմաղթություններն ենք հղում Ձեզ ինչպես Ձեր յոթանասունամյակի, այնպես էլ հետագա բազում տասնամյակների համար:

Մենք այս ասում ենք բարձր գնահատելով Ձեր գործունեությունը որպես եկեղեցական մեծ գործչի և խաղաղության անկնկուն մարտիկի:

Մեծ է Ձեր անձի հմայքը մեր ժողովրդի տարագիր զավակների վրա, մի հմայք, որ բխում է Ձեր բարձր առաքինությունից, լայնախոհությունից և մեծ հայրենասիրությունից:

Նորից ու նորից մաղթելով Ձեզ քաջառողջություն և արևշատություն, մենք հաստատ հավատացած ենք, որ Դուք նույն երիտասարդական կորովով կշարունակեք Ձեր ժողովրդանվեր գործունեությունը, կշարունակեք հանդիսանալ հայրենիք-սփյուռք կապերը Է՛լ ավելի ամրապնդող, տարածված հայության հայացքը դեպի Մայր Աթոռ և մայր հայրենիք ձգող գլխավոր ուժերից մեկը:

ՀԱՆՈՒՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ, ՆԱԽԱԳԱՀ ՌԱՖԱՅԵԼ ՍԱՄՍՈՆՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

(2 հոկտեմբեր 1978 թ.)

Ձերդ Սրբություն,

Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերության անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ 70-ամյա հոբելյանի և «Ժողովուրդների բարեկամության» շքանշանով պարգևատրման առթիվ:

Ձեր գործունեությամբ Դուք մեծ ավանդ եք ներդնում ժողովուրդների մշակութային համագործակցության ասպարեզում:

Լինելով Խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի անդամ, Դուք նպաստում եք խաղաղության պաշտպանության և ժողովուրդների բարեկամության վսեմ գաղափարների իրագործմանը:

Ձեր հայրենանվեր գործունեությամբ, մասնավորապես սփյուռքահայությանը հայրենիքի շուրջ համախմբելու գործում Ձեր ներդրած ջանքերով, Դուք արժանացել եք ճանաչման և խորին հարգանքի ոչ միայն մեր երկրում, այլև նրա սահմաններից դուրս:

Մեծ են նաև հայ մշակույթին մատուցած Ձեր ծառայությունները: Ձեր աջակցությամբ բազմաթիվ արժեքավոր ձեռագրեր հանձնվել են Մատենադարանին: Դուք մեծապես նպաստել եք մեր ժողովրդի պարծանքը հանդիսացող մի շարք պատմական հուշարձանների վերականգնման գործին:

Ի սրտե մաղթում ենք Ձեզ քաջառողջություն, երկար տարիների կյանք, նորանոր հաջողություններ Ձեր խաղաղասեր և հայրենասեր գործունեության մեջ:

ՀԱՆՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ, ՆԱԽԱԳԱՀ ԳՐԻԳՈՐ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ (2 հոկտեմբեր 1978 թ.)

Ձերդ Սրբություն,

Թույլ տվեք Հայաստանի Խաղաղության պաշտպանության կոմիտեի անունից սրտանց ողջունել ու շնորհավորել Ամենայն Հայոց կաթողիկոսիդ՝ ծննդյան փառապանծ տարեդարձի և «Ժողովուրդների բարեկամության» շքանշանով պարգևատրվելու առթիվ:

Մեզ առանձնակի բերկրանք է պատճառում այն, որ կառավարական բարձր պարգևին Ձերդ Սրբությունն արժանացել է խաղաղության պաշտպանության օգտին մատուցած արգասաբեր գործունեության համար:

Հիրավի, Հայոց Հայրապետիդ մարդասիրական համապարփակ առաքելության մեջ խաղաղության ուխտը գահակալության բոլոր տարիներին եղել է ամենանվիրական խորհուրդը:

Հողագնդի ժողովուրդների խաղաղասիրական շարժման տարեգրությունում անշեջ կմնան Պրագայի, Բեռլինի, Մոսկվայի, Ստոկհոլմի խաղաղության կոնգրեսները, աշխարհիկ ու եկեղեցական գործիչների միջազգային համաժողովները, որոնցում լիավյուն մասնակցություն է ցուցաբերել Խաղաղության պաշտպանության սովետական կոմիտեի անդամ, Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ը:

Ամենուր հնչել է Ձերդ Սրբության զորեղ ձայնը ընդդեմ ոճիրներ սերմանող պատերազմների ու բռնության, ընդդեմ սպառազինությունների մրցավազքի ու մահասփյուռ միջուկային զենքերի արտադրության, հանուն աշխարհի կայուն խաղաղության ու ժողովուրդների անվտանգության, հանուն մարդու արդար իրավունքների ու երջանկության, որպեսզի խաղաղության սպիտակ աղավնին այլևս երբե՛ք և ո՛չ մի տեղ արյունով չներկվի:

Այդ մշտաջան-բեղուն գործունեության շնորհիվ Ձերդ Սրբությունն արժանացել է միջազգային ճանաչման և իրավամբ դասվել խաղաղության մեծահամբավ ջահակիրների շարքը:

Հայ ժողովուրդը իր բազմադարյան պատմության ընթացքում կրել է բազմաթիվ ասպատակություններ ու անլուր տառապանքներ: Եվ ամեն անգամ, մահու և կենաց գոտեմարտի ճակատագրական պահերին, Հայոց Հայրապետները ստիպված են եղել սուրը հանել պատյանից ու ժողովրդի հետ մեկտեղ պաշտպանել սիրասուն հայրենիքը:

Բարեբախտաբար, պատմության գիրկն են անցել օրհասական ժամանակները, և հայ ժողովուրդն այսօր, սովետական երկրի զորության ու ազգային իմաստուն քաղաքականության շնորհիվ, ապրում է վտանգներից զերծ, խաղաղ-ստեղծագործ կյանքով: Ուրեմն և երջանկալեցուն է այժմ Ձերդ Սրբությունը, տեսնելով, թե բազմազգ ժողովուրդների եղբայրական անդաստանում ինչպե՜ս է զորացել, ծաղկել ու շենացել մեր նորոգվարդ Հայաստանը՝ օրրանն ու հայրենիքը հանուր հայության:

Այսու իմաստազեղ է Վեհափառիդ սքանչելի խոսքը, թե՝ «Հայ ժողովուրդը արցունքով սերմանեց և այսօր ցնծությամբ կհնձե... Ողջո՜ւյն քեզ և բյո՜ւր օրհնություն, երկիր մեր Նահրյան, վերածնված մեր Մայր Հայաստան»:

Թույլ տվեք, Ձերդ Սրբություն, այդ ընձալի կանչով էլ ավարտել մեր խոսքը և այս փառաշուք հանդիսության ժամին ամբողջ հոգով մաղթել Հա-

յոց Հայրապետիդ արևշատություն, կատարյալ քաջառողջություն, անհատնում եռանդ ու կորով՝ հանուն աշխարհի խաղաղության, հանուն ժողովուրդների հավերժ բարեկամության:

ՀԱՆՈՒՆ ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ, ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ ՏԻԱՐ ՌՈԲԵՐՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

(2 հոկտեմբեր 1978 թ.)

Ձերդ Սրբություն,

Լինելով ֆիզիկապես հայրենիքից հեռու ապրող, լեզվով օտար, բայց հոգով ու սրտով հայրենիքին կապված և սուրբ Էջմիածնի նկատմամբ ջերմ սիրով տոգորված մի հայ մարդ, ես նույնպես ուզում եմ ներկայացնել Ձեզ, հանուն Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկության ի Լիզբոն, իմ խորին հարգանքը և սրտագին շնորհավորանքները Ձեր ծննդյան 70-ամյակի և գահակալության քսաներեք տարիների երջանիկ առիթով:

Ձերդ Վեհափառության գահակալության այդ քսաներեք բեղմնավոր տարիները զուգադիպում են Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկության ստեղծման և նրա գործունեության ժամանակաշրջանին: Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկության գործունեությունը արտասահմանի զանազան հայկական գաղթօջախներում հնարավորություն է տվել ինձ, անցնող քսաներեք տարիների ընթացքում, բազմաթիվ հանդիպումներ և շփումներ ունենալու սփյուռքահայ տարբեր համայնքների հետ և գոհունակությամբ հաստատելու այն մեծ դերը, որ կատարել է Ձերդ Վեհափառությունը Հայաստանյայց առաքելական եկեղեցու վերազարթոնքի և զորացման գործում, եկեղեցի, որը հանդիսանում է սփյուռքահայության գոյատևման և մայր հայրենիքի հետ նրա կապի ամուր կռվաններից մեկը:

Եթե հանգուցյալ Գալուստ Կյուլպենկյանը իր կտակում առանձին մի նվիրատվություն էր արել սուրբ Էջմիածնի համար, դրանով նա անկասկած ուզեցել էր արտահայտել իր սերն ու նվիրվածությունը Մայր Աթոռի նկատմամբ:

Հետագայում նրա անունը կրող Հիմնարկությունը, հետևելով նրա օրինակին, ամեն անգամ, երբ որևէ նվիրատվությամբ իր ջերմ վերաբերմունքն ու առանձին նվիրումն է ցուցաբերել Էջմիածնի հանդեպ, նա այդ համարել է որպես մեծարանք մեծ բարերարի անվանն ու հիշատակին:

Էջմիածնի նորակառույց վանատան բացման հանդիսության ժամանակ Ձերդ Վեհափառությունը ցանկություն հայտնեց, որ Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկությունը շարունակի այսուհետև ևս հետաքրքրություն ցուցաբերել Մայր Աթոռի նկատմամբ և իր մասնակցությունը բերել Էջմիածնում կատարվող աշխատանքներին: Կարող եմ վստահեցնել Ձեզ, որ Լիզբոնի Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկության բոլոր հայ անդամների ոչ միայն ցանկությունը, այլև ձգտումն է ամեն ինչ անել, որպեսզի Հիմնարկությունը առավել սերտ գործակցություն հաստատի Մայր Աթոռի հետ:

Ձերդ Սրբություն, երբ մենք խոսում ենք սուրբ Էջմիածնի մասին, երբեք այն չենք բաժանում Հայաստանից՝ մեր մայր հայրենիքից: Դա նշանակում է, որ մեր Հիմնարկությունը ցանկանում է իր գործակցությունը շարունակել նաև Հայաստանի հետ: Ամեն անգամ, երբ առիթ է ներկայանում մեզ այցելելու Երևան և Հայաստան, մեր սիրտը լցվում է անսահման ուրախու-

թյամբ այն ամենի համար, ինչ տեսնում ենք մեր շուրջը որպես կառուցում, առաջադիմություն ու վերելք, և մենք վերադառնում ենք հոգեպես զորացած, հպարտ և լավատես մեր երկրի լուսավոր ապագայի նկատմամբ:

Այս հանդիսավոր պահին թույլ տվեք, Վեհափառ Տեր, ի սրտե մաղթել Ձեզ քաջառողջ և արևշատ կյանք, երջանիկ հովվապետություն, որպեսզի դեռևս երկար տարիներ հնարավորություն ունենանք գործակցելու Ձերդ Վեհափառության հետ հայ եկեղեցու այս սքանչելի վերազարթոնքի շրջանում:

«Խաղաղության քրիստոնեական կոնֆերանս»-ի անունից (Պրագա) Հայոց Հայրապետի ծննդյան և գահակալության տոնը շնորհավորեց նաև Կոնֆերանսի փոխնախագահ դոկտոր, պրոֆեսոր Գերհարդ Բասսարակը:

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ»-Ի ՓՈԽՆԱԽԱԳԱՀ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ԳԵՐՀԱՐԴ ԲԱՍՍԱՐԱԿԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ

(2 հոկտեմբեր 1978 թ.)

Ձերդ Սրբություն,

Ինձ համար շատ մեծ պատիվ է ուրախությունն ու առիթը ունենալ Ձեզ բերելու, Ձեր ծննդյան 70-ամյակին, «Խաղաղության քրիստոնեական կոնֆերանս»-ի լավագույն մաղթանքներն ու շնորհավորանքները:

Նույն կազմակերպության նախագահ, եպիսկոպոս, դոկտոր Կարոլի Տոթը, Բուդապեշտից, անձամբ ուզում էր այստեղ լինել: Մենք միասին էինք Մոսկվայի օդանավակայանում: Բայց աննպաստ եղանակի պատճառով թռիչքը այնքան ուշացավ, որ նա ստիպված եղավ վերադառնալ Պրագա:

Մենք բարձր ենք գնահատում «Խաղաղության քրիստոնեական կոնֆերանս»-ին Հայաստանյայց եկեղեցու անդամակցությունը, համագործակցությունը և մասնավորաբար Ձերդ Սրբություն Ամենայն Հայոց կաթողիկոսի օգնությունը:

«Խաղաղության քրիստոնեական կոնֆերանս»-ի սկզբնավորության օրից, սրանից 20 տարի առաջ, Ձերդ Սրբությունը մասնակցել է գրեթե մեր բոլոր համաժողովներին:

Ձեր վաստակը աշխարհի խաղաղության պայքարում համաշխարհային ճանաչման է արժանացել:

Հայաստանյայց եկեղեցին և ժողովուրդը քաջ գիտեն, թե ի՛նչ է պատերազմը, ուստի նրանք աղոթում են և պայքարում խաղաղության համար:

Ես բերում եմ մեր լավագույն մաղթանքները ապագա մեր համագործակցության և Ձերդ Սրբության առողջության, բարօրության և արևշատության համար:

Աղոթում ենք, որ Աստված երկա՜ր-երկա՜ր տարիներ նեցուկ լինի Ձերդ Սրբությանը, և նրա հովանին անպակաս լինի Հայաստանյայց եկեղեցու և ժողովրդի վրայից:

ՀԱՆՈՒՆ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ՀԱՅՐ ՆԵՐՍԵՍ ՎՐԴ. ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

(2 հոկտեմբեր 1978 թ.)

Վեհափառ Տեր,

Ձեր գահակալության 23-րդ տարեդարձի բարեպատեհ ու շնորհաբեր արշալույսին, որում ծիրանի ցոլքերում մեջեն կշողա Ձեր սրդյունաշատ

կյանքի 70-րդ տարելիցին պայծառ արևը, հոգեկան անպատում ուրախությամբ համակելով բոլորիս սրտերը, կու գամ ներկայացնել Ձերդ Վեհափառ Տերության, հանուն Մխիթարյան Ուխտի ընդհանուր աբբահայր Պողոս վրդ. Անանյանի և ս. Ղազարու բոլոր միաբաններուն, ամենաջերմ ու սրտագին շնորհավորություններ, որոնց կտեսնեմ հյուսել խոնարհաբար իմ համեստ ու սրտագին իղձերը, լի երախտագիտական անխառն զգացումներով:

Ադրիականի հեռավոր ափունքներուն, խումբ մը վանականներ, բոլորիս պաշտելի Ալիշանի հոգիով լուսակերպված, խանդավառորեն կհետևվինք այս օրերուս ս. Էջմիածնի մեջ կատարվող հոգեպարար արարողություններուն և հանդեսներուն, երկինք բարձրացնելով սիրանվեր մեր իղձերը, որպեսզի Ամենակալը Ձեր կյանքի լուսաշող հորիզոնին վրա ափոե առատազեղ պարգևներ, ի պայծառություն Հայաստանյայց եկեղեցվո և ի քաջալերություն Ձեր բոլոր հոգեզավակներուն, մեր այս սիրելի, ծաղկուն ու փառապանծ հայրենիքեն մինչև ի սիյուռս աշխարհի:

Ձեր ազգանվեր, վանականույց, եկեղեցականույց ու շինարար գործունեության բեղուն տարիները թող երկարին հավետ, առողջ և արևաշող, և Ձեր աստվածահաճո ծրագիրներն իրագործվին բոլոր, խաղաղության անարատ աղավնիի հովանիին տակ, և օրըստօրե պայծառանա ու բարգավաճի ս. Էջմիածնի աստվածապահ Ուխտը, Ձեր գերագույն հոգածությամբ և լուսամիտ առաջնորդությամբ:

Ձեր պայծառ անունը, Վեհափառ Տեր, արդեն իսկ քանդակված հինավուրց կառույցներու վերանորոգ ճակատներուն կամ այլ բազմարժեք ձեռնարկներու կուրծքին, ինչպես մեր սրտերուն մեջ, թող հնչե մեր դարավոր պատմության լուսավոր էջին վրա՝ հերոսական ցնծերգով, Հայաստանյայց եկեղեցվո և հատկապես հայ մշակույթին և արվեստին պանծացման ի նպաստ Ձեր թափած գերագնահատելի ջանքերով, վերածնված և օրըստօրե փայլուն նվաճումներով ամեն ասպարեզի մեջ հառաջացող մեր հայրենիքի ոսկեմատյանին մեջ, անմահանուն և մեծագործ Հայրապետներու, եվրոպական առումով՝ հումանիստ առաքյալներու շարքին:

Մխիթարյան միաբանության ջերմ շնորհավորանքին կխառնվին շնորհակալության իղձեր ալ, Ձեր գահակալության առաջին իսկ օրեն ս. Ղազարի մենաստանին հանդեպ Ձեր հայտնաբերած սիրազեղուն, գուրգուրալիր վերաբերումին համար, շնորհաբեր այցելություններով և հայտնապես վերջերս արտահայտված, բացառիկ վեհանձնությամբ, սատարելու համար մեր անավոր աղետներեն ետք, նշանակալի գումարներով, արտասահմանի փոքրիկ Հայաստանի վերակառուցման գործին:

Մխիթարյան մեծ հոբելյանի առիթով, անցյալ տարի, Ձեր ուղարկած օրհնության շնորհազարդ հեռագիրը և Ձեր մասնակցությունը սպատվական նվիրակի մը միջոցով, հանձին Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ գերշ. Սերովբե արքեպ. Մանուկյանի, ջերմորեն հուզեց մեզ և երախտապարտ կթողու հավետ:

Թույլ տվեք, հուսկ, Վեհափառ Տեր, որ առանձին ու մտերմիկ շունչով հայտնեմ իմ ալ անձնական երախտագետ զգացումներս, որպես Ձեր նախկին աշակերտը, Ռումինիո Պուքարեստ քաղաքեն, և ոգեկոչեմ, այս առիթով, Ձեր ալ ուսուցչական ասպարեզ թևակոխելու ոսկեղեն հիսնամյակը, հանուն Ձեր բոլոր նախկին աշակերտներուն:

Մենք սիրած ենք այն օրեն Ձեր պայծառ ճակատը խոհուն, դյուրված

ենք Ձեր աչքերեն իմաստուն և Ձեր հայրական բարի սրտին մեջ ենք գտած վեհ ու սիրելի անձնավորություն մը, որ այսօր ս. Լուսավորչի գահին բազմավաստակ ժառանգն է՝ որպես Հայրապետ Հայաստանյայց առաքելական եկեղեցվո:

Ձեր Աջը շնորհաբաշխ թող հսկե հանուր հայության վրա տակավին երկար ու բեղուն տարիներ, մշտապես երիտասարդ՝ Լուսավորչի անմար կանթեղին սուրբ կայծերով բորբոքուն:

ՀԱՆՈՒՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԵԼՎԱԾՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ

(2 հոկտեմբեր 1978 թ.)

Սիրելի Վեհափառ և Քրիստոսով պատվական Եղբայր,

Թույլ տվեք Ձեր գահակալության քսաներեքերորդ տարեդարձին և Ձեր ծննդյան յոթանասունամյակին առթիվ, հանուն ավետարանականներուս և Երևանի հայ ավետարանական-մկրտչական եկեղեցվո, սրտանց շնորհավորել Ձեզ և մեր խնդակցությունները հայտնել Ձեզի:

Կհիշեմ, երբ առաջին անգամ պատիվն ու հաճույքը ունեցա 1956-ին Մարսելի «Սիլանտիտ» հյուրանոցին մեջ ծանոթանալու Ձեզի, ուր եկած էի բարի գալուստ մաղթելու և մեր խմբագրած «Վերելք» հոգևոր ամսագրին համար ասուլիս մը պատրաստելու:

Անցյալ քսաներեք տարիներու ընթացքին մեր եղբայրական կապը հետզհետե ամրացավ, և այս պահուն սրտի անհուն հրճվանքով կողջունեմ Ձեր տարեդարձները:

Քրիստոս, որ պատգամեց՝ «Ես եմ ճամփան, ճշմարտությունը և կյանքը, ես եմ աշխարհի լույսը, ան որ ինձի կհավատա, հավիտենական կյանք ունի», Ձեզի տված է ոչ միայն Լուսավորիչի գահուն վրա բարձրանալու կոչումն ու առաքելությունը, այլ նաև այդ առաքելությունը գործադրելու հատուկ պարգևներ և այս շնորհքին համար մենք փառք կուտանք մեր պարգևատու Աստուծույն: Ուրախակից ենք՝ պետության կողմե «Ժողովուրդներու բարեկամության» շքանշանով պարգևատրվելնուդ առթիվ:

Դուք ոչ միայն աստվածընտիր և ազգընտիր կաթողիկոս եղաք, այլ նաև ժամանակին համապատասխան իմաստուն Հոգևոր Պետը, Աստուծո սիրով լեցուն:

Մեծ Վարպետը՝ Ավետիք Իսահակյան, «Աբու-լալա Մահարի»-ի մեջ կըսե. «Մարդիկ պատվում են **ոսկուց** և **վախից** միայն»: Մենք Ձեզ կպատվենք սիրով, Ձեր արժանիքներուն համար՝ իբրև Հայոց Հովվապետը:

Ձեր մասին երբ կխոսինք, չենք գոհանար միայն «Վեհափառ» տիտղոսով: Դուք ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ եք, և մենք՝ ավետարանականներս, որպես հարազատ հայեր, Ձեր զավակներն ենք, հետևաբար՝ Դուք մեր ալ կաթողիկոսն եք:

Կաղոթենք, որ Աստված երկար կյանք տա Ձեզի, երկնառաք ուժ և կարողություն, որպեսզի կարենաք շարունակել Ձեր աստվածահաճո և ազգօգուտ առաքելությունը մեր վերածնած Սովետական Հայաստանի և սփյուռքի զավակներուն մեջ: Թող անգամ մըն ալ մեր մեջ արծարծվի Լուսավորիչներու, Մեսրոպներու, Վարդաններու և Ղևոնդ Երեցներու աստվածատուր

ս. հոգին, որպեսզի հայը ապրի մինչև մեր Փրկչին Հիսուս Քրիստոսի փառավոր վերադարձը:

Կխոնարհինք Ձեր առջև՝ ի փառս Աստուծո, և որդիաբար կողջունենք Ձեզ:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ ԵՎ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վեհափառ Հայրապետի ծննդյան 70-ամյակի, գահակալության 23-րդ տարեդարձի և «Ժողովուրդների բարեկամության» պետական բարձր շքանշանով Նրա պարգևատրվելու առիթով ստացվել էին նաև բազում շնորհավորական հեռագրեր և գրություններ, որոնցից հետևյալները հանդիսության ժամանակ ընթերցվեցին.

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆադեյ Սարգսյանի, ինչպես նշվեց (էջ 22):

ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ Վլ. Ա. Կուրոյեդովի (Տես «Էջմիածին» ամսագիր, սույն համար, էջ 24):

ՍՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ

Շնորհավորում եմ Ձեզ՝ Ձեր 70-ամյակի առթիվ: Ժողովուրդների միջև խաղաղության ամրապնդման ուղղությամբ Ձեր ծավալած գործունեությունը վայելում է հարգանքը աշխարհի առաջադեմ մարդկանց և թույլ է տալիս ինձ ցանկանալու Ձեզ լավագույն բարեմաղթություններ և քաջառողջություն:

Միևնույն ժամանակ շնորհավորում եմ Ձեզ մեր հայրենիքի բարձր շքանշանով պարգևատրվելու առթիվ:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ

Ձեր 70-ամյակի տոնական օրերին, որպես ժողովուրդների միջև խաղաղության անխոնջ մարտիկի, ընդունեցեք շնորհավորանքներ ամենալավ ցանկություններով:

Դուք ակտիվորեն օժանդակում եք բազմապատկելու ուժերը խաղաղության սուրբ գործի համար ամբողջ աշխարհում:

Ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն, բեղմնավոր գործունեություն՝ հանուն խաղաղության:

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ

Հարգարժան Վեհափառ,

Թույլ տվեք ողջունել Ձեր յոթանասունամյակը: Ձեր անխոնջ գործունեությունը, հանուն աշխարհի խաղաղության, արժանացել է համընդհանուր հարգանքի և համակրանքի: Շնորհավորում եմ Ձեզ պետական բարձր պարգևի առթիվ:

Ցանկանում եմ ամուր առողջություն և եռանդ:

ԱԿԱՆԱՎՈՐ ԳՐՈՂ ՄԱՐԻԵՏԱ ՇԱՀԻՆՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ

Հարգարժան Վեհափառ Հայրապետ,

Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ՝ Ձեր ծննդյան յոթանասունամյակի առթիվ: Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն, երջանկություն և բարօրություն՝ Ձեզ և հայ ժողովրդին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԱՐ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

Վեհափառ Տեր,

Այս օրերուն ամբողջ սփյուռքահայությունը իր աչքերը դարձյալ կուղղե դեպի սուրբ Էջմիածին, հոգևին մասնակցելու համար Նորին Սրբությանդ յոթանասունամյակի տոնակատարությանց:

Ձեր կյանքը լոկ անհատի մը կյանքը չհանդիսացավ երբեք, այլ ան լեցվեցավ հայ ժողովուրդի ժամանակակից պատմությամբ, անոր խինդերով ու վիշտերով, երազներով ու հաղթանակներով: Մասնավորաբար Ձեր կյանքին վերջին երկու տասնամյակները նվիրվեցան համայն հայության հոգևոր առաջնորդության գործին, երբ Ձեր շնորհալի անձով բախտավորվեցավ սուրբ Գրիգոր Լուսավորչի դարավոր գահը: Ձեր կյանքն ու անունը նույնացան սուրբ Էջմիածնի հետ, և այդ պատմական Աթոռի առաքելությունը շարունակելու քաղցր լուծը վստահվեցավ Ձեր առաքինազարդ անձին: Եվ Դուք, շնորհիվ Ձեր հոգեկան զորության, իմացական պայծառության և շինարար կամքին, այդ առաքելությունը տարիք խոնարհությամբ ու վեհությամբ: Ձեզմե հասնող պատմության ձայնով առաջնորդվեցավ սփյուռքի հայությունը. Ձեր մխիթարական խոսքերով գոտեպնդվեցավ ան և Ձեզմով նորոգեց իր հավատքը հանդեպ սուրբ Էջմիածնին և իր նախահայրերու նվիրական հողին:

Բախտավոր է հայ ժողովուրդը, որ յոթանասունամյակի սեմին ունի կենսունակությամբ և ստեղծագործական եռանդով լի Հոգևոր Գերագույն Պետ մը, հանձին Վեհափառությանդ:

Երազի համազոր բազմաթիվ ծրագիրներ ու նպատակներ իրագործվեցան Ձեր գահակալության օրհնաբեր տարիներուն, Ձեր հոգևոր հաղթանակներով և դեպի ապագան ձգտող բարի հույսերով:

Ձեր հայրապետական սիրտը վրդովեցավ նաև Հայաստանյայց եկեղեցին խոցող տխուր տագնապներով. Ձեր վճիտ հոգին սակայն միշտ բարություն, համերաշխություն և լավատեսություն ճառագայթեց: Ձեր սրտցավ խոսքերով, հորդորներով, գիրերով և ուղևորություններով համերաշխության սերմեր սփռեցիք ամեն կողմ:

Մեր ձայնը միացուցած բովանդակ աշխարհի հայության ձայնին, Նորին Սուրբ Օծությանդ կմաղթենք երկար, բեղուն և արևաշատ տարիներ, որպեսզի Մայր Աթոռը շարունակե իր պայծառ ու կենարար լույսով ողողել Ձեր հավատավոր հոտին հոգիները տակավին բազում տարիներ:

Մատչելով ի համբույր Ձեր սուրբ Աջույն,
մնամք որդիական ակնածանոք:

ՀՈԲԵԼՅԱՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔՆ ՈՒ ՊԱՏԳԱՄԸ

Հոբելյանական սույն նիստի ավարտին Հայոց Հայրապետը հրավիրվում է Իր օրհնությունն ու պատգամը տալու:

Ողջ դահլիճը հոտնկայս մի անգամ ևս ցնծագին ծափահարություններով ողջունում է Հայոց Հայրապետին (Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքը տես «Էջմիածին» ամսագիր, սույն համար, էջ 7):

Տասը րոպե ընդմիջումից հետո սկսվում է հոբելյանական սույն նիստի գեղարվեստական բաժինը:

Մայր տաճարի երգեհոնահար Լևոն Աբրահամյանը կատարել էր այս առթիվ որոշ շարականների եղանակների մշակումներ, որոնց կատարմամբ հանդես եկան Մայր տաճարի նորակազմ կամերային նվագախումբը և երգչախմբի արական կազմը՝ ղեկավարությամբ Լևոն Աբրահամյանի:

Կատարվեցին Աստվածածնի տաղը՝ «Վարանիմք»-ը, մենակատար՝ Նորա Մելքումյան, ընկերակցությամբ կամերային նվագախմբի. տաղ խաչի՝ «Խաչն ի նախնումն», մենակատար՝ Լուսինե Զաքարյան, ընկերակցությամբ կամերային նվագախմբի: Ապա կամերային նվագախումբը և Մայր տաճարի երգչախմբի արական կազմը կատարեցին «Անձինք նուիրեալք» «Խնկին ծառին», «Ով երանելիքդ ամենեցուն» շարականները՝ ղեկավարությամբ խմբավար, հանրապետության վաստակավոր արտիստ Խորեն Մելխանեջյանի:

Գեղարվեստական ծրագրի մեջ տեղ էին գտել նաև կոմպոզիտոր Ալեքսանդր Հարությունյանի և խմբավար Խորեն Մելխանեջյանի «Զոն Վեհափառ Հայրապետին» ստեղծագործությունները, որոնք կատարվեցին Մայր տաճարի երգչախմբի կողմից:

Երեկոյան ժամը 22.30-ին ավարտվեց Վեհափառ Հայրապետի ծննդյան 70-ամյակին և գահակալության 23-րդ տարեդարձին նվիրված հոբելյանական հանդիսությունը՝ խանդավառ և սրտագին մթնոլորտում: